Azg Ազգ

5 ՅՈՒԼԻՍ 2008 ՇԱԲԱԹ 128 (4022)

ԵԱՀԿ ԽՎ-ի նոր նախագահը պատրաստ է աջակցելու դարաբաղյան հակամարտության լուծմանը

ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նորընտիր նախագահը պատրաստ է հնարավոր բոլոր ջանքերը գործադրելու «սառեցված» դարաբաղյան հակամարտության կարգավորման համար: «Մենք ջանում ենք այդ հիմնախնդիրը լուծել ընդհանուր ջանքերով: Ես որպես ԵԱՀԿ-ի ԽՎ-ի նորընտիր նախագահ, կդառնամ հնարավոր ամեն ինչ անել եւ առկա բոլոր ռեսուրսներն օգտագործել դարաբաղյան հակամարտության լուծման ուղիներ գտնելու համար», հինգշաբթի օրն Ասատանայում ասել է ԵԱՀԿ ԽՎ-ի նախագահ Ժոան Սուարեսը: Ըստ նրա՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը պետք է վճռորոշ դեր խաղա այդ հարցում:

Սերժ Սարգսյանը կմեկնի Ասատանա

Նախագահի նստավայրից հաղորդում են, որ Սերժ Սարգսյանը հուլիսի 5-ին աշխատանքային այցով կմեկնի Ասատան: Հայաստանի նախագահը կմասնակցի Դազախստանի մայրաքաղաքի 10-ամյակի առիթով Ասատանա ժամանած պետությունների ղեկավարների հանդիպմանն, ինչպես նաեւ ներկա կգտնվի քաղաքի հիմնադրմանը նվիրված տոնակատարություններին:

Համաշխարհային հայկական կոնգրեսը պատրաստվում է իր հերթական համագումարին

Ըստ Արա Աբրահամյանի, ախյուռոֆի կոմիտեի միջոցով հնարավոր կդառնա միավորվել եւ ընդհանուր թիմով գործել ազգային շահերի պաշտպանության հարցերում

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը երեկ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում ներկայացրեց իր գլխավորած երկու կառույցների կազմակերպչական ու ծրագրերը: Խոսելով նախ ՌՀՄ հերթականության մասին՝ Աբրահամյանն ընդգծեց, որ դեռեւս ոչ ռուսաստանաբնակ հայությունը չի համախմբվել: Ու չնայած դրան, ՌՀՄ կազմում այսօր 70 տարածքային եւ ավելի քան 400 շրջանային ու քաղաքային կառույցներ կան: Դրանք սերտորեն համագործակցում են Ռուսաստանի իշխանության տեղական մարմինների հետ, ստեղծում հարաբերություններ, ինչը հեշտացնում է հայությանն առնչվող խնդիրների լուծումը:

Աբրահամյանի հավաստմամբ, կազմակերպությանը դիմող ամեն

մի հայի խնդրանքին անտարբեր չեն մնում: ՌՀՄ-ին օգնության խնդրանքով նաեւ գործարարներ են դիմում ու սպանում աջակցություն, մինչդեռ կազմակերպությունը դեռեւ միայն մեկ աղբյուրից է ֆինանսավորվում:

Մինչեւ 2000-ը Ռուսաստանի հայերի միության ստեղծումը Ռուսաստանում հայկական բոլոր համայնքներում միասին գործում էր ընդամենը 30 կիրակնօրյա դպրոց: Այսօր այդ թիվը հասել է 340-ի: Մոսկվայում գործում է հանրակրթական պետական թիվ 1110 դպրոցը՝ էթնո-մշակութային հայկական բաղադրիչով, բոլոր դասարաններում դասավանդվում է հայոց լեզու եւ գրականություն Հայաստանի կրթության նախարարության ծրագրով: ՌՀՄ նախաձեռնությամբ Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանում բացվել է հայոց լեզվի ու գրականության ուսումնասիրման կենտրոն, եւ անցած տարիների ընթացքում ավելի քան 50 ռուս շրջանավարտներ սպացել են հայոց լեզվի դասավանդման մասնագետի կոչում:

Տես էջ 3

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ

Սահմանադրության արժեքը չենք գիտակցում

Սահմանադրության օրը շատ ազգեր նշում են իբրեւ տոն: Հայաստանում եւս Սահմանադրության օրը տոն է: Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանն, օրինակ, այսօր նշում է այդ տոնը, հրավիրյալներով, ֆուրշեթի սեղանով եւ սահմանադրության հիմունքների մասին ասված մի ճարտար ճառով: Մի հեռահրահրական զուգադրությամբ ամերիկացիք երեկ նշում էին Անկախության օրը, որը բացի ռազնում հանում այդ օրվա խորհրդի: Գուցե դա նրանից է, որ մեր երկրում ամեն պահ ոտնահարվում է սահմանադրությունը: Ես չեմ տեսել մեր երկրում առավել ոտնահարվող մի բան, քան երկրի սահմանադրությունն է: Երկրի սահմանադրությունը ոտնահարում է թե՛ պաշտոնյան, թե՛ հասարակ մարդը, թե՛ առավել եւս՝ օլիգարխը, ու ոչ ոք դա առանձնապես մեծ մեղք չի համարում իր համար: Ես չեմ հիշում մի դեպք, որ որեւէ մեկի



սեփական երկրում ծոխ-ծոխ տոնելուց, նշում են նաեւ այլ երկրներում՝ ռեգիոնեն կառույցների միջոցով, ու տվյալ երկրների բարձրաստիճանները գնում են մասնակցելու այդ տոնի կատարմանը, ասենք, ամերիկյան դեսպանատներում: Բացառություն չէ Հայաստանը, որտեղ երկրի նախագահի մակարդակով մասնակցություն է ապահովվում ամերիկյան Անկախության օրվա խորհրդին: Ու սպացվում է, որ ամերիկյան տոնն ավելի լավ ենք նշում Հայաստանում, քան մեր Սահմանադրության օրը: Զուգադրելով ասենք, որ մենք դեռեւս չենք գիտակցում մեր սահմանադրության արժեքը, դրա իմաստավորումը հայերիս համար դեռեւս չի դարձել կենցաղի անբաժան մաս, մեր սեղաններին բաժակ չենք բարձրացնում դրական գործընթաց սկսելի Հայաստանի սահմանադրությունը խախտելու համար: Չեմ հիշում, որ որեւէ պաշտոնյայի գործունեությունը կամ գործունեության մի հատվածը, որ ոչ պրոֆեսիոնալ է ու նյութապես կամ բարոյապես վնասել է երկրին, հակասահմանադրական համարվեն: Բայց ամեն քայլափոխում տեսանելի են սահմանադրության ոտնահարումներ, եւ դա մեր կենսակերպն է դարձել: Օրինակ՝ Աժ պատգամավորին սահմանադրությունն ու օրենքները արգելում են բիզնեսով զբաղվել, սակայն մեր Ազգային ժողովում մասերի վրա կարելի է համարել բիզնես չունեցող պատգամավորներին:

Տես էջ 2

Իրադրության կտրուկ սրում վրաց-օսական գոտում

Հուլիսի 3-ի գիշերը Ցխինվալի քաղաքի գնդակոծման հետեւանքով զոհվել է երկու եւ վիրավորվել վեց մարդ: Ինչպես հաղորդում է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, վրաց-օսական հակամարտության գոտում իրադրության կտրուկ սրման առնչությամբ մոբիլիզացվել են հանրապետության բոլոր ուժային կառույցները: Ըստ ՆԳՆ ղեկավար Միխայիլ Մինձաեւի, գնդակոծությունն իրականացվել է Նիկոզ վրացական գյուղի կողմից: Գնդակոծության են ենթարկվել քաղաքի բնակելի թաղամասերը: Օսական կողմը, նշել է նախարարը, պատասխան կրակ չի բացել: Վրաստանի ԶՈՒ միացյալ շտաբի խաղաղարար գործողությունների շտաբի պետ, բրիգադի գեներալ Մամուկա Կուտաբվիլին «պատեղեկատվություն» է համարել այն պնդումները, թե «վրացական կողմը անցած գիշեր կրակ է բացել Ցխինվալիի բնակելի թաղամասերի ուղղությամբ»: Իրականում հուլիսի 3-ի ուշ երեկոյան եւ անցած կեսգիշերին, ասել է նա, «հարավօսական անօրինական զինված կազմավորումները գնդակոծել են խաղաղապահ խաղը ուժերի վրացական խաղաղարար գումարտակի մի քանի պահակակետեր»: Ըստ նրա, «Չնայած վրացական կողմի պահանջներին, հրաձգությունը չի դադարեցվել, եւ դրանից հետո վրացական կողմը պատասխան կրակ է բացել»:

Մարտիմեկյան դեպքերով կալանքի տակ է 17 մարդ

Հուլիսի 4-ի դրությամբ նախաքննության մեջ գտնվող գործերով կալանավորված անձինք 17-ն են: Այս մասին «Նոյյան տապանի» թղթակիցը տեղեկացավ ՀՀ գլխավոր դատախազությունից: Փոփոխություն է կրել գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանի մեղադրանքի ծավալը՝ ապօրինի զենք կրելու մեղադրանքի փոխարեն առաջադրվել է իշխանության յուրացման մեղադրանք: Վերջին հոդվածով մեղադրվում է նաեւ «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սմբատ Սվազյանը: Քրեական օրենսգրքի 4 հոդվածներով մեղադրանք է առաջադրված ՆԳՆ բեռական գործերով պաշտոնների իրականացման վարչության նախկին պետ Սուրեն Սաղաթելյանի դեմ: Նույնատիպ հոդվածներով մեղադրանք է առաջադրվել նաեւ ՀՀՇ անդամ Վարդան (Վահագն) Հայոցյանի դեմ: Ջանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ մեղադրվում են Գրիգոր Ոսկերչյանը, Սուրեն Սիրունյանը, Գաբրիել Գաբրիելյանը, Գնել Թովմասյանը եւ Շանթ Հարությունյանը: Վերջինիս դեմ մեղադրանք է առաջադրված նաեւ երկու այլ հոդվածներով՝ իշխանության յուրացում եւ սպանություններով զուգորդված զանգվածային անկարգություններ: Նույն հոդվածներով մեղադրվում են նաեւ Աժ պատգամավորներ Մյասնիկ Մալխասյանը եւ Սասուն Միհայլյանը, ՀՀՇ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանը, նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը, Վերժ Նիկոլյանը: Ս. Միհայլյանը մեղադրվում է նաեւ զանգվածային անկարգություններին անմիջականորեն մասնակցելու մեջ: Աժ պատգամավոր Հակոբ Հակոբյանը մեղադրվում է իշխանության յուրացման եւ ապօրինի զենք պահելու հոդվածներով՝ 300 հոդվածի առաջին մաս եւ 235 հոդվածի առաջին մաս: Իշխանության յուրացման մեղադրանք է առաջադրվել նաեւ Ազգային անվտանգության պետական վարչության պետի նախկին տեղակալ Գուրգեն Եղիազարյանին: Երկու հոդվածներով (ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը եւ օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառում կազմակերպելը եւ անցկացնելը) մեղադրվում է «Մասենադարանի» փոխտնօրեն Արտակ Բանույանը:

Տեր-Պետրոսյանը բոլոր մահացու մեղքերի մեջ Ռոբերտ Քոչարյանին մեղադրեց

Իսկ հանրահավաքային ալիքն, իսկապես, այն չէ

ՄԵՐԻԵՏԱ ԽԵՉՈՅԱՆ

Տեր-Պետրոսյանի գլխավորած շարժման մարտավարությունը փոխվում է. մինչեւ օգոստոսի 1-ը՝ հաջորդ մեծ հանրահավաքը, հուլիսին այլեւս հանրահավաքներ չեն լինելու, այլ լինելու են նստացույցեր, պիկետներ, երթեր եւ այլ լոկալ միջոցառումներ եւ Երեւանի, եւ մարզային մակարդակներով, օգոստոսի 1-ի հանրահավաքին են պատրաստ նախապատրաստվելու: Մյուս ուղղությունը, որտեղ ջանալու են արտասահմանները, կուսակցական մոնոլիտ կառույցի՝ Ազգային կոնգրեսի կառուցվածքների ստեղծման ուղղությամբ ջանքերն են լինելու, որին, երեկվա հանրահավաքին ելույթ ունեցած Լեւոն Տեր-Պետրոսյանի կարծիքով, մասնակից կլինեն ընդդիմադիր դաշտի շատ միավորներ:

Միանգամից ասենք՝ երեկվա

հանրահավաքը շատ մարդաշատ չէր, եկել էին Տեր-Պետրոսյանի գլխավորած շարժմանը հավատարիմ մնացած մարդիկ եւ շարժման ակտիվիստները:

Տես էջ 2

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ադրբեջանը որպես Ռուսաստանի նորահայտ ռազմավարական գործընկեր

Ադրբեջանը երկրորդն էր ԱՊՀ երկրների մեջ (Ղազախստանից հետո), որտեղ ոտքս դնելով եղավ Ռուսաստանի Նախագահ Դմիտրի Մեդվեդևը: Եվ եթե նկատի ունենանք, որ ուղևորության մեջ մեկնած են նաեւ Թուրքմենստանն ու նորեն Ղազախստանը, ապա պարզ է դառնում, որ ծրագրի անկյունաքարը էներգակիրներն են, գլխավորապես գազը, դրա պաշարներն ու արտահանումը:

Ըստ ռուս փորձագետների, Ռուսաստանը չէր կարող անտարբեր մնալ Ադրբեջանը ՆԱՏՕ-ի կազմի մեջ ընդգրկելու ամերիկացիների ակնկալիքներին: Բացի այդ, ժամանակն է իրապես հակազդելու էներգակիրները Ռուսաստանը շրջանցելով արտահանելու Արեւմուտի նախագծերին: Իր հերթին Ադրբեջանը ձգտում է հավասարակշռել հարաբերությունները Վաշինգտոնի եւ Մոսկվայի միջեւ՝ ինչպես հոգուս իր քաղաքական ու տնտեսական շահերի, այնպես էլ ընդդեմ Հայաստանի:

Պատահական չէ, որ ստորագրված բարեկամության եւ ռազմավարական գործընկերության հռչակագրում ընդգծված է Ղարաբաղի խնդրի կարգավորման կարեւորությունը քննությունների տարածքային անթողնելիության եւ տահմանների անձեռնմխելիության պահպանման պայմանով:

Մինչեւ 2007-ն Ադրբեջանն իմն էր գազ գնում Ռուսաստանից: «Գազպրոմը» բարձրացրեց գնները եւ Բաքուն հրաժարվեց գնումներից: Սակայն նկատի ունենալով համաշխարհային էներգետիկայի զարգացման գործընթացները, ռուսները խոստանում են այսուհետեւ գազ ձեռք բերելիս առաջնորդվել եվրոպական գներով եւ դրանով հրապուրել Ադրբեջանին ու միջինասիական հանրապետություններին:

Ելնելով Մեդվեդեւի եւ Ալիեւի լավատեսական հայտարարություններից, կարելի է կռահել, որ սկզբունքային համաձայնություններ ձեռք են բերվել: «Գազպրոմի» նախագահ Միլլերի ասելով, բանակցությունները կսկսվեն արդեն երկնագույն հեղուկի գնման պայմանների շուրջը: Եվ սա արդեն հաստավում է ճեղքում տվյալ բնագավառում:

Բնական է, հայերիս պիտի հետաքրքրի ռուս-ադրբեջանական նոր կապ պայմանավորվածությունների ազդեցությունը Ղարաբաղի խնդրի վրա: Բանն այն է, որ նավթի ու գազի նշանակությունը համաշխարհային տնտեսությունում հիրավի այնքան հրատապ է, որ տարածաշրջանային կոնֆլիկտներն անգամ խամրում են դրա առջեւ: Այստեղ գտնում են, որ ադրբեջանցիներն իրենց «համաձայնությունների» դիմաց զիջումներ պիտի պահանջեն Մոսկվայից, բայց թե ինչ չափով, բնական է, մնում է գաղտնի: Ընդգծվում է նաեւ, որ ինչ-որ տեղ Սերժ Սարգսյանին զգուշացվում է նատոյամետ եւ առհասարակ արեւմտամետ ընդգծված քայլեր անելու մտադրություններից: Նշվում է նաեւ, որ Ալիեւը հաջողությամբ է իրագործում Հայաստանի բարեկամների հետ էլ ավելի բարեկամական հարաբերություններ հաստատելու իր քաղաքականությունը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ներդրվել են տեղեկատվական համակարգեր

ՀՀ ափխաստանի եւ սոցիալական հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնը դարաբաղյան գործընկեր գերատեսչությունում ներդրել է ափխաստանի փնտրողների ու գործատուների հաշվառման, հաշվանդամների հաշվառման, ափխաստանի տեսչության եւ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության տեղեկատվական համակարգեր, որի շնորհիվ տեղի ունեցավ երեկ՝ Ստեփանակերտի կայազորային սպայի տան դահլիճում: Շնորհանդեսի կազմակերպիչների հաղորդմամբ, համակարգի ներդրումը մեծապես կնպաստի պետական ծառայությունների որակին, պետական հաղորդակցության թափանցիկության ապահովմանն ու կառավարման ընթացակարգերի կատարելագործմանը:

Կենտրոնի տնօրեն Հայկ Զորաբյանի պարզաբանմամբ, համակարգերի ներդրումը հնարավորություն կտա հաղորդագիրներին հասանելի լինելու տեղեկատվական հոսքին: Բացի այդ, նրանք այսպիսեւ կազատվեն տեղեկանքներ ներկայացնելու անիմաստ հաբեռնվելից, ինչպես նաեւ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները կարող են ստանալ կայքի միջոցով:

Ինչպես տեղեկացանք ԼՂՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, սոցիալական ապահովության նախարարությունում ինքնակվել եւ հավանության են արժանացել այն բոլոր ծրագրերը, որոնք կապված են, մասնավորապես, գերատեսչության էլեկտրոնային կայքէջի ստեղծման եւ անշնչակազմի կառավարման տեղեկատվական համակարգի ձեւավորման հետ: Համաձայնություններ են ձեռք բերվել նաեւ հետագա համագործակցության վերաբերյալ: Ասել է թե՝ գործընթացը շարունակվում նպատակադրություն ունի, եւ «Նորք» կենտրոնը ակտիվ մասնակցություն կունենա դրանում:

Ինչպես լրագրողներին տեղեկացրեց ԼՂՀ սոցապ նախարարի տեղակալ Լենսոն Ղուլյանը, արդեն իսկ վաղվանից բոլոր հաշվանդամների տվյալները տեղադրված կլինեն բազայում:

Կ. ՊԱՐԻՆԵՆՅԱՆ,
Ստեփանակերտ

Սահմանադրության արժեքը չենք գիտակցում

1-ին էջից

Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի ազատելու իրավունքը, բայց, օրինակ, 40-ն անց հանի՞ կին կարող է իրացնել իր այդ սահմանադրական իրավունքը Հայաստանում: Հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությամբ միայն մարդուն կարելի է ձերբակալել, բայց մերոնք երբ ուզենան եւ ում ուզենան կձերբակալեն՝ հիմնավորումն էլ հետո կամ կլինի, կամ՝ ոչ: Սահմանադրությամբ հանցագործության մեջ մեղադրվող հաստավում է անձեր, հանի նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած դատավճռով, բայց հենց «02» հարդարաբարով ամեն անգամ խախտվում է անձեղության կանխավարկածը՝ ապացուցման գործընթացները, ոստիկանը գազ ձեռք բերելիս առաջնորդվել եվրոպական գներով եւ դրանով հրապուրել Ադրբեջանին ու միջինասիական հանրապետություններին:

Ելնելով Մեդվեդեւի եւ Ալիեւի լավատեսական հայտարարություններից, կարելի է կռահել, որ սկզբունքային համաձայնություններ ձեռք են բերվել: «Գազպրոմի» նախագահ Միլլերի ասելով, բանակցությունները կսկսվեն արդեն երկնագույն հեղուկի գնման պայմանների շուրջը: Եվ սա արդեն հաստավում է ճեղքում տվյալ բնագավառում:

Բնական է, հայերիս պիտի հետաքրքրի ռուս-ադրբեջանական նոր կապ պայմանավորվածությունների ազդեցությունը Ղարաբաղի խնդրի վրա: Բանն այն է, որ նավթի ու գազի նշանակությունը համաշխարհային տնտեսությունում հիրավի այնքան հրատապ է, որ տարածաշրջանային կոնֆլիկտներն անգամ խամրում են դրա առջեւ: Այստեղ գտնում են, որ ադրբեջանցիներն իրենց «համաձայնությունների» դիմաց զիջումներ պիտի պահանջեն Մոսկվայից, բայց թե ինչ չափով, բնական է, մնում է գաղտնի: Ընդգծվում է նաեւ, որ ինչ-որ տեղ Սերժ Սարգսյանին զգուշացվում է նատոյամետ եւ առհասարակ արեւմտամետ ընդգծված քայլեր անելու մտադրություններից: Նշվում է նաեւ, որ Ալիեւը հաջողությամբ է իրագործում Հայաստանի բարեկամների հետ էլ ավելի բարեկամական հարաբերություններ հաստատելու իր քաղաքականությունը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ԱՌԱՆՑՔ

Սեւանա լճի մակարդակը բարձրացել է

Վերջին 6 ամիսներին Սեւանա լճի մակարդակը բարձրացել է 48 սմ-ով: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանը: Ըստ կոմիտեի նախագահի՝ ջրի մակարդակն այժմ կազմում է 1899,27 մետր, ինչը 27 սմ-ով բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Այս տարի խորհրդարանի որոշմամբ թույլատրվել է Սեւանա լճից բաց թողնել 250 մլն խմ ջուր, նախորդ տարիներին թույլատրվող ծավալը կազմում էր 150 մլն խմ: Անդրանիկ Անդրեասյանը Սեւանից այս տարի ավելի շատ ջուր վերցնելը պատճառաբանեց նրանով, որ ոռոգման սեզոնն ավելի շուտ է սկսվել եւ հնարավոր չի եղել անհրաժեշտ քանակով ջուր կուտակել ջրամբարներում հետագա ամիսների համար: Ներկայումս Սեւանա լճից ոռոգման նպատակով արդեն բաց է թողնվել 117 մլն խմ ջուր: Սակայն, չնայած դրան, ջրային տնտեսության կոմիտեի նախագահը հույս հայտնեց, որ այս տարի եւս լճի մակարդակի բարձրացման վերջին մի քանի տարիների տեմպերը կպահպանվեն:

Ջրային տնտեսության կոմիտեի նախագահը երեկ անդրադարձավ նաեւ ֆրանսիական «Սաուր» ընկերության կողմից «Հայջրմուղկոյուղու» վարձակալության ժամկետի երկարացման հնարավորությանը, ասելով, որ այս տարվա հոկտեմբերին լրանում է կառավարման 4-ամյա ժամկետը եւ պայմանագրով հնարավորություն է տրված եւս 2 տարով երկարացնելու: Ըստ Անդրանիկ Անդրեասյանի, Համաշխարհային բանկի լրացուցիչ վարկային ծրագրի հաստատման դեպքում, ինչի նախնական համաձայնությունն արդեն կա, հավանական է, որ վարձակալման պայմանագիրը երկարացվի եւս երկու տարով:

Ա. Մ.

Տեր-Պետրոսյանը բոլոր մահացու մեղքերի մեջ Ռոբերտ Քոչարյանին մեղադրեց

1-ին էջից

Մարզերից էլ եկածներ կային, որոնք տեղեկացնում էին, որ նրանց խոչընդոտում էին երեւան հասնել, եւ մարզերից եկածների առումով գուցե իսկապես հանրահավաքը մասնակիցների կորուստ ուներ, սակայն երեւանյան միտինգավորն այդպիսի պրոբլեմ չուներ. մարում է հանրահավաքն, անխոս, եւ պատահական չէ, որ այս անգամ թվեր չէին հրապարակում հանրահավաքի կազմակերպիչները. ամենաշատը մի 10 հազար մարդ կլիներ, անգամ գուցե ավելի նվազ:

Այսինքն՝ այս մասով մեծ ճիշտ էինք, ժողովրդական լայն զանգվածը երկարատեւ պայքարի հակված չէ: Եվ չնայած Լեւոն Ջուրաբյանն իր խոսքում ասաց, թե իրենց մարտավարությունն ամբողջովին չեն հրապարակում, բանի որ իշխանությունները իմանում եւ միջոցներ են ձեռնարկում, այնուամենայնիվ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի խոսքից պարզ դարձավ, որ այդպիսի հստակ մարտավարություն երեւի թե գոյություն էլ չունի, հարմարվում են օրվան՝ մինչեւ տեսնեն:

Տեր-Պետրոսյանի ելույթում թեեւ կային նոր շեշտադրումներ, մի քանի «սիրուն-պատկերավոր» եւ հանրահավաքային զանգվածին հաճո կետեր, սակայն ընդհանուր ելույթը նույն պատկերների մեջ էր, ինչ որ նախորդ մյուս ելույթները. բոլոր մահացու մեղքերի մեջ մեղադրվում էր Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանի հրաժարականը դեռ մինչեւ օգոստոսի 1-ը կարելի է չպահանջել՝ այս 20 օրը տրվում էր նրան հրաժարվելու կիսամիջոցներից, ազատ արձակելու քաղբանտարկյալներին, հեռացնելու Արմեն Գեւորգյանին, Հովիկ Աբրահամյանին, Աղվան Հովսեփյանին, ԱԱԾ ղեկավարին, Ալիկ Հարությունյանին, մի շարք այլ անհեռանգելի միջոցառումներ իրականացնելու: Ապա նա արտահերթ նախագահական ընտրություններ պետք է նշանակի, ահա այս դեպքում միայն Ս. Սարգսյանին Տեր-Պետրոսյանը իբեն արժանի մրցակից կհամարի նոր նախագահական ընտրություններում, որտեղ եւ միգուցե վերջինս լեգիտիմացնի իր նախագահ լինելը: Ահա այսպես:

Իսկ Ռոբերտ Քոչարյանը ոչ մի շանս չունի. ըստ Տեր-Պետրոսյանի՝ նա կորցնման եզրին է հասցրել երկիրը, կոռումպացրել, օլիգարխացրել, Ղարաբաղի խնդիրը բերել-հասցրել է տարածային վեճի մակարդակի, եւ շատ այլ մահացու մեղքեր գործել՝ մի մեծ ցուցակ թվեց այդ մեղքերից, բայց չմոռացավ դրական քայլերն էլ թվել. 500 մ (թիվը գուցե ճշգրիտ չեմ հիշում) կարմիր ժապավեն է կտրել, մի 10 հազար մարդու մեդալ ու գեներալի կոչում է տվել, աշխատատեղեր ստեղծելու մտահոգությամբ բազմապատկել է նախարարների թիվը, եւ այլն, եւ այլն. Տեր-Պետրոսյանը գոհ էր իր հումորից եւ իմպուլսներ էր ստանում ոգեւորող ծափերից ու բացականչություններից:

Դեռ վերջում էլ Լեւոն Ջուրաբյանը որպես նոր մարտավարություն՝ հանրահավաքի մասնակիցներին հրավիրեց հենց հանրահավաքի ավարտին, արդեն մութն ընկնող երեւանի փողոցներով գնալ նստացույցի Հյուսիսային պողոտայում: Մյուս առավոտ չէին կարող մարտավարություն փոխել, հենց այդ կիսամթով, ուժեղացված ոստիկանական օղակների միջով պիտի գնային:

Իհարկե, Տեր-Պետրոսյանի ելույթի որոշ շեշտադրումները դիտարկելու առիթ դեռ կունենանք, բայց գլխավորը, արդեն մի քանի անգամ կրկնվածը, եւ հիմա նոր ուժով առաջարկվածը ուլտիմատումներն էին Սերժ Սարգսյանին՝ այնուամենայնիվ համագործակցելու, երկխոսելու դուռն ու միջանցքը բաց թողնելով:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեջ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հարությունյան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՀԱՎԵՏԻՔ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ / հեռ 529221
Հասցեատիրոջին (գովազդ) / հեռ 582960
Լուսագրության սենյակ / հեռ 581841
Հանձնարարագրերի ծառայություն / հեռ 582483
Շտաբային լուսանկարչություն / հեռ 529353
Հանձնարարագրային ծառայություն
«Ազգ» թերթ
Թերթի նիթերի ամբողջական թե մասնակի արտադրությունը տրպագիր մամուլի միջոցով կամ ծանրոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խստիվ արգելվում են
Համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիթերը չեն գրախօսում ու չեն վերադարձնում
Գ տարով յորոյանները գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում.
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Համաշխարհային հայկական կոնգրեսը պատրաստվում է իր հերթական համագումարին

1-ին էջից

Արա Աբրահամյանը ընդգծեց նաեւ հայերի՝ Ռուսաստանի տարբեր իշխանական օղակներում ներգրավված լինելու կարեւորությունը: Մինչեւ 2001 թվականը Ռուսաստանի դաշնային եւ տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված հայերը ընդամենը 50 հոգի էին, մինչդեռ 2008-ի տվյալներով նրանց թիվը հասնում է շուրջ 250-ի: Բացի այդ, Ռուսաստանում բոլոր ընտրությունների ժամանակ ծանաչված կուսակցությունների ղեկավարները հանդիպում են ունենում Ռուսաստանի հայերի միության կենտրոնական աղարատում, ներկայացնում իրենց մոտեցումները հայության խնդիրներին:

Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահը հիշատակեց կառույցի հրաղարակած երկու խոշոր աշխատությունները. «Հայերի ցեղասպանությունը: Թուրքիայի պատասխանատվությունը եւ միջազգային հանրության պարտավորությունները» եռահատորը եւ «Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքում եւ համաշխարհային հաղորդակցության մեջ» երկհատորյակը, որի երկրորդ հատորը լույս կտեսնի շուտով եւ կներկայացնի հարցի լուծման փորձագիտական եզրակացություններ: Ներկայումս նախատեսվում է իրականացնել համահայկական ակցիա, որի նպատակն է սփյուռքի հայ համայնքներում մեկ օրում հավաքել ներկայացուցչական ժողովներ եւ ընդունել մեկ հայտարարություն՝ «Հայ հասարակության միասնական դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման վերաբերյալ»:

ՌՀՄ եւ ՀՀԿ գործունեության ոլորտում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում եւ կզբաղեցնեն ի բարություն Հայաստանի եւ Արցախի իրականացվող ծրագրերն ու նախագծերը, որոնք նպատակաուղղված են օժանդակելու Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, հայկական ոլորտանության պահպանմանն ու ամրապնդմանը: Կազմակերպությունների նախաձեռնությամբ տեղի են ունեցել մի շարք տնտեսական համաժողովներ Հայաստանում, որոնցից «առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեց այս տարվա հունվարին կազմակերպված հայ-ռուսական բիզնես ֆորումը, որտեղ ստեղծվեց գործարարների հայ-ռուսական երկխոսության ընկերակցություն ստեղծելու առաջարկությունը: Ըստ Աբրահամյանի, Ռուսաստանում մի շարք երկրների հետ նման ընկերակցության աշխատանքի փորձ կա, եւ օգտակար կլինի այդ օրինակը Հայաստանում կիրառելու:

Հայաստանում գիտության, արվեստի, կրթության զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացումը դարձել է ՌՀՄ եւ ՀՀԿ գործունեության հիմնական ուղղություններից մեկը: 2001-ից զգալի ֆինանսական օժանդակություն է ստացել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան, իսկ 2007-ին Կոնգրեսի օժանդակությունը Հայաստանի ԳԱԱ-ին նոր որակ ստացավ, երբ համատեղ ստեղծվեց գիտության զարգացման հիմնադրամը:

Նման հիմնադրամ է գործում նաեւ Հայաստանի Գողոնների միության հետ համագործակցության շրջանակներում: 2007-ին ՌՀՄ ու ՀՀԿ նախաձեռնությամբ եւ ֆինանսական միջոցներով Գողոնների եւ Ժուռնալիստների միությունների հետ հայտարարվեցին նաեւ ստեղծագործական մրցույթներ, որոնց այս տարի միացել են Կոմպոզիտորների, Նկարիչների միությունները եւ Գիտությունների ազգային ակադեմիան:

ԼՀՄ-ն եւ ՀՀԿ-ն շարունակում են «Հայաստանի եւ Արցախի դպրոցների համակարգչայնացմանը՝ համազգային հոգածություն» շարժումը, որի շրջանակներում համակարգչային դասարաններ ու լսարաններ են ձեւավորվել Հայաստանի եւ Արցախի ավելի քան 700 դպրոցներում, բուհերում, ուսումնական այլ հաստատություններում: Ներկայումս Արա Աբրահամյանի միջոցներով 500 աշակերտի համար նախատեսված նոր դպրոցի շինարարություն է սկսվել Ստեփանակերտում:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հայոց բանակին: Բանակի համար պարբերաբար նյութական, բարոյական, կրթամշակութային օժանդակության ծրագրեր են իրականացվում: Այդ շրջանակներում միայն վերջին երկու տարում բանակը ստացել է ավելի քան 450 համակարգիչ:

Մինչեւ ասուլիսը Արա Աբրահամյանը հանդիպում էր ունեցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ, որի առնչությամբ նշեց, որ քննարկել են երկու կազմակերպությունների իրականացրած ծրագրերն ու հետագա անելիքները: Մասնավորապես, Աբրահամյանը կարեւորեց, որ Սերժ Սարգսյանի՝ Ռուսաստան կատարած վերջին երկու այցելությունների ընթացքում հանդիպում է եղել համայնքի ներկայացուցիչների հետ:

Ի դեմ, այս համատեքստում լրագրողների հարցերին՝ ինչպես գնահատել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների այցերը Ռուսաստան ու կնքված նաեւ ռուս-ադրբեջանական պայմանագրերը, Արա Աբրահամյանը ընդգծեց, որ ինքը ՌԴ քաղաքացի է եւ ուրախ է, որ ՌԴ նախագահ Ադրբեջանի հետ լավ պայմանագրեր է ստորագրում, ինչը կարող է շատ օգտակար լինել:

ՌՀՄ եւ ՀՀԿ նախագահը մեծապես կարեւորեց ԱԳՆ-ին կից նորաստեղծ սփյուռքի հարցերով կոմիտեի հիմնումը, որի ղեկավարի հետ Աբրահամյանը կհանդիպի այսօր: Ըստ Արա Աբրահամյանի, այդօրինակ կառույց ստեղծելով հնարավոր կդառնա միավորվել եւ թիմով ընդհանուր գործեր կատվեն ազգի, մշակույթի, լեզվի պահպանության եւ այլ հարցերի առումով: ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահը տեղեկացրեց, որ Հայաստանի նախագահից խնդրել է ավելի մեծ ուշադրություն սփյուռքի հարցերին, ինչին նախագահ Սարգսյանը արձագանքել է, որ Հայաստանն էլ ոչ այնքան նյութական օգնություն է ակնկալում սփյուռքից, որքան պատասխանատվության:

Այս եւ շատ այլ հարցեր կքննարկվեն հոկտեմբերին Երեւանում կայանալիք ՀՀԿ հերթական 2-րդ համագումարում, որտեղ կընտրվեն նաեւ կազմակերպության ղեկավար մարմիններ: Համագումարը տեղի կունենա ավանդույթ դարձած «Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության օրերը Հայաստանում եւ Արցախում» ծրագրի շրջանակներում:

Գործարարները դժգոհեցին ԱԱՀ վերադարձման ուշացումից եւ պատժիչ սուգումներից

Զարգացման հայկական գործակալությունում (ԶՀԳ) երեկ քննարկեցին Հայաստանում հարկային վարչարարության կատարելագործման վերաբերյալ կառույցի ներկայացուցիչների եւ գործարարների առաջարկները: Գործակալության տնօրեն Ռոբերտ Հարությունյանը կարեւորեց այստեղ առկա խնդիրների վերաբերյալ գործարարների մոտեցումները, որոնցի դրանք նկատի առնվեն տնտեսական հաղորդակցության ճակատման ժամանակ: Մինչդեռ, ինչպես նշվեց քննարկման ժամանակ, հարկային վարչարարության հայեցակարգի վերաբերյալ գործարարներից ստացվել է ընդամենը 6 առաջարկ:

Գործարարներն անդրադարձան ավելացված արժեքի վերադարձման խնդրին: Առաջարկվեց ԱԱՀ վերադարձն ուշացնելու համար սահմանել տույժեր եւ տուգանքներ, այնպես, ինչպես դրանք սահմանված են գործարարների համար, երբ նրանք ուշացնում են հարկերի, տուրքերի կամ տույժերի վճարումը:

Հարկային ոլորտային ծառայության հարկային վարչարարության բարեփոխումների բաժնի պետ Արման Զարգարյանը այդ առնչությամբ նշեց, որ այս տարի պետբյուջեում առանձին տողով 22 մլրդ դրամ է նախատեսվել ԱԱՀ վերադարձման համար: Այժմ նախագիծ է մշակվում, որտեղ պետք է հստակեցվեն ԱԱՀ վերադարձման ծրագրի ներդրման ժամկետները եւ այդ ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ցանկը:

Գործարարներն իրենց դժգոհությունները արտահայտեցին «ի սկզբանե ակտ գրելու սկզբունքով» հարկային տեսուչների այցելությունների վերաբերյալ: Հաճախ սուգող մարմինների ոչ մասնագիտական մոտեցումները վնասում են իրենց գործունեությանը եւ ավելորդ ժամանակ խլում: Ըստ գործարարների, սուգումները պետք է նաեւ որոշակիորեն խորհրդատվական բնույթ կրեն:

Նախագահի խորհրդական Վահրամ Ներսիսյանը նշեց, որ բոլոր առաջարկները քննարկման կդրվեն, իսկ քննարկումների վերջնական արդյունքները կներկայացվեն վարչապետին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԿՆՈՋ ԱՇԽԱՐՀ»

Բացահայտեմ կնոջ աշխարհը

«Էխպո 2008»-ը Նկարիչների միությունում

Հայ կինն այսօր դարձել է ավելի կրթված ու գործունյա, մեծ տեղ է հատկացնում իր արտաքինին ու հետաքրքրություններին՝ միաժամանակ պահպանելով հայ կնոջը բնորոշ նվիրվածությունն ընտանիքին: Այսօր նա կարողանում է համատեղել աշխատանքը, կարիերան, ընտանիքի խնամքն ու երեխաների դաստիարակությունը: Կնոջ հմայքն ու գեղեցկությունն ավելի ընդգծելու, նաեւ նրա նկատմամբ հասարակության վերաբերմունքը, պահանջները ու ձգտումները ցույց տալու նպատակով երեկ Նկարիչների միությունում բացվեց «Կնոջ աշխարհ» յոթերորդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը: Ներկայացված կոստեմիկ եւ բուժիչ միջոցները, զարդերը, հագուստն ու կոշկեղենն ավելի են ընդգծում կնոջ բացառիկությունն ու գրավչությունը:

Այսօրինակ մասնագիտացված ցուցահանդեսները ներկայացնում են երկրի տնտեսական, սոցիալական վիճակը: Ցուցահանդեսում ներկայացված ավելի քան երեք տասնյակ ընկերություններից ընդամենը մի քանիսի արտադրանքն է արտադրվում Հայաստանում, ինչն հերթական անգամ աղացուցում է, որ Հայաստան ավելի շատ արտահանվում:

«Կանանց բոլոր խնդիրները ներկայացված են ցուցահանդեսում: Ի տարբերություն նախորդ տարիների, այս անգամ տեսականին ավելի շատ է, բնականաբար որակն էլ է բարձրանում: Գեղեցկության կենտրոնները կցուցադրեն մասներ կլաս: Ցուցահանդեսը կտեւի երեք օր, համոզված եմ, որ կհետաքրքրի հայ կանանց ու աղջիկներին», ասում է «Էմոդի մեդիայի» տնօրեն Անանա Հակոբյանը:

ՀԵՍՈՒՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հայփոստի» վերանորոգված երկու բաժանմունք Գյումրիում

Գյումրիում երեկ «Հայփոստը» վերաբացեց վերանորոգված երկու նոր՝ թիվ 3 եւ թիվ 15 փոստային բաժանմունքները: Վերանորոգված բաժանմունքները կունենան առաքբաց ինտերնետ կետ, որը փոստային բաժանմունքի տարածքում հասանելի կլինի բոլոր ցանկացողներին:

«Հայփոստ» ընկերությունը հաստատել կարեւորում է Գյումրիում իր փոստային բաժանմունքներն առի չափանիշներով վերանորոգելու եւ առաքբաց ինտերնետ կետով ապահովելու անհրաժեշտությունը, հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ կառավարության ծրագրով Գյումրի քաղաքը դառնալու է նոր տեխնոլոգիաների կենտրոն», նշել է ընկերության կառավարիչ Հանս Բոնը:

Ա. Մ.

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 12.00-ին «Հայաֆ» մամուլի ակումբի հյուրն է իրավաբանական գիտությունների թեկնածու Հրայր Թովմասյանը: Թեման՝ «ՀՀ սահմանադրությունն ու հասարակությունը»:

◆Ժամը 13.00-ին Պատկեր հայրիկյանը հրավիրում է մամուլի ասուլիս Դավիթաբեկի իր այգում՝ նվիրված Սահմանադրության օրվան եւ ընդդիմության հանրահավաքին:

◆Ժամը 13.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Հայաստանի հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանը: Թեման՝ «Սահմանադրական բարեփոխումներ. իրավունքների եւ ազատությունների պաշտպանության գլխավոր երաշխիք»:

◆Ժամը 17.00-ին Արարատի մարզի Ջովաշեն գյուղում, Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնի նախաձեռնությամբ տեղի կունենա Սահմանադրության օրվան նվիրված համերգ հայկական էստրադայի աստղերի մասնակցությամբ: Մեկնումը 15.00-ին, Արաքունյաց 5 հասցեից:

Կիրակի

◆Ժամը 10.20-ին Չեխիայի արտաքին գործերի նախարար Կարել Շվարցենբերգի գլխավորած պատվիրակությունը կայցելի Մեծ եղեռնի հուշահամալիր:

◆Ժամը 11.00-ին ԱԳՆ-ում տեղի կունենա Չեխիայի ԱԳ նախարար Շվարցենբերգի հանդիպումը էդվարդ Նալբանդյանի հետ:

◆Ժամը 11.50-ին ԱԳՆ սրահում տեղի կունենա ՀՀ ԱԳ նախարար էդվարդ Նալբանդյանի եւ Չեխիայի ԱԳ նախարար Կարել Շվարցենբերգի համատեղ մամուլի ասուլիսը:

Երկուշաբթի

◆Ժամը 10.10-ին Զարգացման հայկական գործակալությունում (Չարենցի 17) տեղի կունենա հայ-չեխական բիզնես ֆորումի բացումը, որտեղ Չեխիայի եւ Հայաստանի ԱԳ նախարարները հանդես կգան ելույթով:

◆Ժամը 13.00-ին Armenian Music Center-ում (Կարապետ 16/1) տեղի կունենա երգչուհի Վարդանի Վարդանյանին նվիրված երգերի ձայնասկավառակի շնորհանդեսը, ինչին ներկա կլինեն էստրադային բազմաթիվ երգիչներ:

◆Ժամը 13.00-ին «Հայաֆ» մամուլի ակումբում կքանավիճեն Աժ պատգամավոր, ՀՀԿ խմբակցության անդամ Մկրտիչ Մինասյանը եւ ՀՀ հաղորդագրողների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը:

Հայը եւ հայը

ԵՐՈՒԱՆԴ ԱՋԱՏԵԱՆ

Տագնապի եւ ճակատագրական կործանման հեռանկարին դիմաց երբեմն ոչխտ է կանգ առնել եւ հարց տալ, թէ ո՞վ է հայը, ինչ է անոր ճակատագիրը, ինչ կ'ուզէ իր անձէն եւ ինչ կ'ակնկալէ այս ափարհէն: Այս հարցադրումներուն դիմաց մենք կ'ունենանք մէկ պատասխան՝ հայը հանճարեղ է անհատապես եւ ոչ այնքան՝ հաւաքաբար: Եւ այդ հակասութիւնը միշտ առաջնորդած է զինք իմնակործանման:

Ու դեռ հայը սեղծագործող է, տնտեսական փայլուն միտք է, արի զինուորական է եւ փայլուն ռազմագէտ ու հրամանատար, երբ օտարի լուծին է ենթակայ: Ու դեռ հայը իր բախտին, իր ճակատագրին, իր հաւանական փրկութեան առաջին քանիին է:

Ցմոռնանք, որ Մեծն Տիգրանի փառին ու կայսրութեան անկման ճգտող հոմէական զօրքերու սատարողը Նոյնիսկ Արեւելք Արեւի որդին էր: Ցմոռնանք, որ Բիւզանդիոնի Մօրիկ կայսր հայկական ծագում ունէր, նոյնպէս ռազմական հրամանատար Փիլարտոսը, երբ Բիւզանդիոնի սահմանագլուխներուն հայկական պետականութիւնը, հայկական իշխանապետութիւնները սելջուքեան սպառնալիքի տակ էին: Եվ անոնք կործանեցին հայկական պետականութիւնը եւ 1452-ին աղէտը հասցուցին Բիւզանդիոն ու Կոստանդնուպոլիս: Ու դեռ չմոռնանք, որ միջնադարեան հայ մշակոյթի պայծառ ոսկան Անի հաղարի բերդի բանալին մեր Վեսս Սարգիսն է, որ յանձնեց օտարին:

Ցմոռնանք նաեւ, որ 1918-ի փետրուարին, երբ Զօր. Անդրանիկ Երզրումի մէջ հայրենի հողի մէկ պատմական բեկորը կ'ուզէր պաշտպանել, ռուսական դասալիք բանակէն աւար մնացած հարուածներով ու պաշարներով, իր արեւելահայ կամաւորները լքեցին ճակատը, թողուցին բաժին թողելով պատմական այդ հողը:

Ու դեռ առաջին հանրապետութեան բարիքները չվայելած՝ արտաքին գրոհներուն չափ նոյնքան ներքին պառակտումները մեզ առաջնորդեցին նորահասաս հանրապետութեան վախճանումին:

Մեր ներքին հակասութիւնները, միասնական կամքի բացակայութիւնը, արտաքին աղէտի դիմաց անհասկանալի զգայազրկութիւնը՝ միշտ ակամահարած են պետականութիւն կառուցելու եւ հաւանական մեծութեան ձգտելու մեր ազգի ազնիւ փաթաստիությունը:

Բայց միւս կողմէ միշտ հպարտացած ենք մեր առեւտրականներով, ռազմական հանճարներով ու մասնագէտներով, որոնք սատարած են օտար պետութեանց: Մեր ճարտարապետներ Սինանն ու Տրդատը փայլուն ծառայութիւններ մատուցած են ափարհի ճարտարապետական փառքին: Հայը Օսմանեան կայսրութեան սատարած է Տիզբեաններով, Գազազ Արթին ամիրաներով, դիւանագէտ Նորատունկեաններով, իսկ Ռուսական կայսրութեան ու Սովետական հզօր երկրի սահմաններէն ներս Լազարեաններով, Մանթաշովներով, Բաղրամեաններով, Սաֆարեաններով, Միկոյեաններով եւ Իսակովներով:

Սակայն, երբ տարուած ենք մեր ներքին պայքարներով՝ երբեմ չենք յիշած Հոմի ծերակոյտին մէջ անընդհատ հնչող զգաստութեան կոչերը, թէ «Անիբալը դռանն է»: եւ Անիբալները միշտ եղած են մեր դռանը եւ այսօր ալ կը շարունակեն մնալ:

Մեր փոքրիկ, խեղճացած եւ անյուսորէն մահառող երկրին սպառնացող Անիբալները դեռ արթուն են մեր դռանը եւ անհաւասային՝ մեր երկրի վերջնական կործանումը, իրենց համար հաւասալի եւ իրական ծրագիր է միայն: Թուրքը, ազերիները եւ անոնց նեռ կանգնող ուժերը մեր այսօրուան Անիբալներն են: Ամէն հայու մէջ Արտակ Բ արքայ մը կը բնակի, որ կ'ուզէ թագաւոր դառնալ իր հողին վրայ: Ցաւը, սակայն, այն է, որ մեր երկրին նեղ սահմանները տեղ չեն թողուր այդման թիւով արքայական յատկութիւններու:

Սակայն ո՞վ պիտի հնչեցնէ զգօնութեան ձայնը այսօր, ո՞վ պիտի բացայայտէ, թէ «Անիբալը դռանն է» եւ կոչ ուղղէ հաւաքական զօրաշարժի ընդդեմ արտաքին Անիբալներուն:

Մեր պատմական Արցախի սահմանները շատ դիւրաբեկ են այսօր եւ աւելի հեշտ կը թուի խախտել մեր երկրի արտաքին սահմանները, քան այն անանցանելի պատեր, որոնք բարձրացած են մեր հողին վրայ, մարդոց հոգիներէն ու միտքերէն ներս:

Առաջի հայուն մէջ գոյութիւն ունեցող այդ երկու հայերու անհասկացողութիւնը մեր ազգային յատկենական ողբերգութիւնն է, որ պիտի տանի մեզ պատմականօրէն կրկնուող ճակատագրի կործանման:

Մեր սուրբ հողին, մեր ժողովուրդի պատմական այս վերջին կոուանին համար չկայ ուրիշ փրկութիւն եւ չկայ ելք, եթէ հայուն անհասական հանճարը չխօսի անոր հաւաքական տխմարութեան հետ, եթէ հայը հայով չամբողջանայ եւ անհաս հայուն հանճարը չտիրապետէ հաւաքական հայուն կամքին ու միտքին:

Ցեղասպանությունը «Թայմսի» օնլայնում

Պատմաբանների, լրագրողների եւ գիտաշխատողների ուշադրությունը հրավիրելով անգլիական հեղինակաւոր «Թայմս» թերթի օնլայն հրատարակումներին (The Times:http://archive.timesonline.co.uk/tol/archive/#), ժամ էսիյանը մեկ օրինակ է բերում թերթի 1915 թվի սեպտեմբերի 25-ի համարից: Հոդվածը վերնագրված է՝ «Մի ամբողջ ազգի բնաջնջումը: Երիտթուրքերի քաղաքականությունը ընդդեմ հայերի»:

«Եթե պատերազմը հիմից չի ցնցում ամբողջ աշխարհը եւ թողնում է, որ կարեւոր իրադարձությունները լռության մատնվեն, ապա անտարակույս հաղթակիրթ աշխարհի բոլոր երկրներում հանրահավաքներ կանցկացվեն բողոքելու երիտթուրքերի հայկական հաղթականության անմարդկային բնույթի դեմ:

Դա կարելի է ամփոփել մեկ նախադասությամբ, որ նոր ասիմանական, բայց արդյունավետ ձեւով բնաջնջում են ամբողջ հայ ժողովրդին եւ ձերբազատվում հայաստաբ մի ցեղից:

Կարգը հետեւյալն է. ամեն մի հայկական գյուղից օրական այնքան մարդ են դուրս բերում, որքան գնացքները կարող են տանել: Երբ նրանց դուրս են բերում եւ ուղեկցորդի առաջնորդությամբ հում դեպի Տավրոսի լեռները, որից այն կողմ այդ թափառները, որ ընդամենը մի քանի օրվա սննդի պաշար ունեն, պետք է շարունակեն իրենց ճանապարհը դեպի հարեւան Մոսուլ, որտեղ իր աղահով կլինեն:

Բայց իրականում այդ տարածը ընդամենը անապատ է եւ մի քանի ժամվա ընթացքում ուրդ կամ բեդվին ասպատակների խմբերը թալանում են ու կողոպտում այդ անօգնական տղամարդկանց, կանանց եւ երեխաներին, որ ողջ մնացողները մահանում են սովից եւ ծարավից:

Նրանցից ոչ մեկը չի հասնում նախատեսված վերջնակետը: Ովքեր փորձում են փախչել այլ ուղղությամբ, սպանվում են թուրք հովվների կողմից: Հուսահատ կանայք իրենց երեխաներին նետում են եփրատ գետը, չտեսնելու համար նրանց տառապանքը: Ոմանք էլ նույնիսկ վաճառում են նրանց: Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան Ամերիկայի դեսպանին հայտնել է, որ մտադիր չէ փոխել իր հաղթականությունը եւ որ «հայկական հարցը նրան զվարճացնում է»:

Փոքր Ասիայում եւ մասնավորապես հայկական շրջաններում տեղակայված ամերիկյան միսիոներական կազմակերպությունները ասիմանաբար թողնում են տարածը դեսպանի խորհրդով:

Թուրքերի հաղթականությունն ընդհանուր առմամբ վրեժխնդրության դրսեւորում է: Մահվան դատապարտվածներից յուրաքանչյուրը անմեղ հաղթաց է»:

Հոդվածը ստորագրել է «թղթակիցը»:

Օնլայնում տեղադրվել են թերթի նյութերը 1875 թվից:

Հ. Ծ.

Անվանի գիտնականն ու արժանավոր մարդը

Ակադեմիկոս Լյուդվիկ Միրզոյանի 85-ամյակի առիթով

Ակադեմիկոս Լյուդվիկ Միրզոյանի (1923-99) անունն անբաժանելի է թէ՛ Բյուրականի աստղադիտարանի ու աստղաֆիզիկայի զարգացման, թէ՛ Հայաստանի ողջ գիտության պատմությունից: Մայիսի 1-ին լրացավ այդ անվանի գիտնականի ու առաքինի մարդու ծննդյան 85-ամյակը, եւ մենք մեր արժանի տուրն ենք մատուցում նրա կյանքին ու գործին:

... Լյուդվիկ Միրզոյանի մասին իմ առաջին տպավորությունները 35 տարուց ավելի վաղեմություն ունեն. 1972-ին թե 73-ին գիտնականը մեր տուն հյուր էր եկել Փարիզում (հայրս դիվանագետ էր, աշխատում էր Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանությունում), եւ հիշողությանս մեջ մինչեւ հիմա մնացել է Միրզոյանի խորհուրդը՝ խորապես ուսումնասիրել մայրենին, կատարելապես տիրապետել հայերենին: Հետո էլ ինձ՝ դպրոցականիս առավել մատչելի ձեւով պատմում էր աստղագիտությունից, պատմում էր այդ գիտության ամենակարեւոր հարցերը:

Հետագայում նրա հետ բազմիցս ըմբռնվել եմ Երեւանում, Գիտությունների ազգային ակադեմիայում, Բյուրականում, միշտ հիշելով իրենից ստացած մայրենիի դասը...

Ակադեմիկոս Միրզոյանի կենսագրության մեջ առաջնորդվել է իր ադրոտ հակասական ժամանակը, որ վեհի կորիզն ողբերգականն էր:

1935-ին իրեն, որպես ուսման գերազանցիկի, հնարավորություն է ընձեռվում օդանավով թռիչք կատարելու Երեւանի վրայով եւ օդից տեսնելու մայրաքաղաքը:

Երջանիկ մանկությունն ընդհատվում է 1930-ին, երբ ներքդրծողները ձերբակալում է, դատապարտում ու գնդակահարում հորը, Մակրուհի գաղթած Վասիլի Միրզոյանին, որը մրցերի խանութ ուներ, իսկ խորհրդայնացումից հետո պատահաբերների տեսքի ներքոյ էր: Տարիներ անց Իրանի օգին լրտեսության անհեթեթ մեղադրանքը հանանելու է անհիմն եւ հայրը հետահու արդարացվելու է: Իսկ մինչ այդ «ժողովրդի թշնամու» զավակ Լյուդվիկը պիտի անցներ դժոխքի ուղիներով: Հորը կազատվելու իսկ օրը գնդակահարել ասպետին ազատում են դասարանի ակտիվ պատասխանատվություններից:

15 տարեկան պատանին մնում է ընտանիքի միակ տղամարդը, որը պիտի հոգար մոր ու երկու քույրերի ապրուստը: Սակայն ուսման ծարավն այնքան մեծ էր, որ Միրզոյանն ավարտելով դպրոցը, միաժամանակ բանվորություն անելով ընդունվում է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետ: Ցվստահելով, նրան անգամ չեն թողնում ուզածակաս մեկնել, եւ նա գնում է ափխատանքային գումարտակ, հունգարացի ու գերմանացի ռազմագերիների հետ մասնակցում «Հաղթանակ» կամրջի շինարարությանը, հիշում է քույրը՝ Նինա Դարիբջանյան-Միրզոյանը:

Պատերազմից հետո էքսերտ կարգով հանձնելով քննությունները բաց թողած տարիների համար, 1947-ին ավարտում է համալսարանը: Նույն թվականին աշխատանքի է ընդունվում նոր-նոր ստեղծվող Բյուրականի աստղադիտարանում, որին անմնացորդ նվիրում է իր հետագա կյանքն ու գիտակազմակերպական գործունեությունը: 1953-59-ին վարել է աստղադիտարանի գիտական քարտուղարի, իսկ 1959-86 թթ. 27 տարի անընդմեջ՝ համաշխարհային համբավ ունեցող այդ հաստատության փոխտնօրենի պաշտոնները, միաժամանակ 1965-86 թթ. ղեկավարելով աստղերի միգամածությունների ֆիզիկայի բաժինը: Գործընկերների վկայությամբ, ավելի քան քառորդ դար Բյուրականի աստղադիտարանի գիտական առօրյան, բազմաթիվ ու բազմաբնույթ գիտաժողովների, գիտական այլ հավաքների բարեհաջող ընթացքը զգալիորեն պայմանավորված էր ակադեմիկոս Լ. Միրզոյանի բազմաբեղուն գործունեությամբ: Մասնավորապես նրա անմիջական ղեկավարությամբ տեղադրվել եւ շահագործվել են Շմիդտի մեկ մետրանոց եւ 2,6 մետր տրամագծով մեծ աստղադիտակները:

Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լյուդվիկ Միրզոյանը զգալի ավանդ է ներդրել երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Մանկավարժական գործունեությունն սկսելով ԵՊՀ-ում 1949-ին, 1970-ին դառնում է մայր բուհի պրոֆեսոր: Ժամանակակից աստղաֆիզիկայի տարբեր ոլորտներին վերաբերող իր չափազանց հետաքրքրական դասախոսությունները կլանված լսել է հայ աստղագետների մի քանի սերունդ:

Միջազգային աստղագիտական միության ու ԽՍՀՄ ԳԱ Աստղագիտական խորհրդի անդամ Լ. Միրզոյանը գործուն մասնակցություն է ունեցել «Աստղաֆիզիկա» միջազգային գիտական հանդեսի կազմակերպման եւ լույսընծայման գործընթացին՝ սկզբում իբրեւ գլխավոր խմբագրի տեղակալ, այնուհետեւ՝ գլխավոր խմբագիր: Նրա անխոնջ ջանքերով է, որ ենթագետիկ ճգնաժամի տարիներին այդ հեղինակաւոր պարբերականը շարունակում է լույս տեսնել:

Զավակները՝ Նունեն, Անահիտը եւ Առան, հիշում են իրենց շատ բարի ու հոգատար, բայց եւ խիստ ծնողի մասին: Սիրել է դասական երաժշտություն, հետաքրքրվել է լեզվաբանության խնդիրներով, որպես Հայաստանի տերմինաբանական կոմիտեի անդամ հայերենի է վերածել աստղաֆիզիկային, ֆիզիկային եւ մաթեմատիկային վերաբերող բազմաթիվ հասկացություններ: Ընկերական շրջապատում իրավամբ ունեցել է լավ քամադայի համբավ: Երբ ընտրվեց Ֆրանսիայի աստղագնացության ակադեմիայի անդամ (ընդ որում ԽՍՀՄ-ից առաջինը) եւ Փարիզի աստղաֆիզիկայի ինստիտուտի խորհրդական, երեխ ամսում սովորեց Ֆրանսերեն: Աստղերից բացի, սիրել է հողը, այս զգացմունքն արտահայտելով իր բյուրականյան այգում:

Համարյա 9 տարի է անցել անվանի գիտնականի ու արժանավոր հաղթացու մահվան օրվանից: Թվում է, որ ժամանակն է ակադեմիկոս Լյուդվիկ Միրզոյանի անվամբ անվանակոչելու մեկական փողոց Երեւանում եւ Բյուրականում: Առաջադեմ կլինի, որ հայրենասեր մտավորականի անունը նաեւ ֆիզիկաթեմ ներկա լինի երկու այդ բնակավայրերում, որ նրա ոգեղեն ներկայությունը չի մառում մինչեւ օրս:

Վիլյամ Մարոյանի հետ Բյուրականում

ՏՈՔԹԻՆ ԼՈՒՍՈՅԻՆ

5 ՅՈՒԼԻՍ 2008 ԷՋ Ա

ՀԱՅԵԼԿԱՅ ՄԱՄՈՒՆՅՈՒՆ

Պարբերականությունը՝ երկաբաթյա

Թիվ 13(56)

«Կը կարծեի, որ պիտի փոխեի աշխարհը, որ քառս մըն է»

Զրույց Վիլյամ Սարոյանի եւ Օշին Քեշիշյանի միջեւ

Ամերիկահայ գրականագէտ եւ լրագրող Դոքթ. Օշին Քէշիշյանը շաբաթներ մեր մէջ է եղել համաշխարհային համբաւի գրող Վիլյամ Սարոյանի հետ: Հանդիպումներ է նաեւ Ֆրեզնո՝ Եղիա Ճինոյանի եւ Արամ Արաֆսի հետ: Քէշիշյանը գլխաւորել է երեք հոգուց բաղկացած այն հանձնախումբը, որ Սարոյանի ամբողջ մի մասը փոխադրեց Երեւան, Հայաստան, 1982-ի մայիսին, եւ որ ելոյթ ունեցաւ Պանթեոնում արարողության ժամանակ մայիսի 29-ին:

Վիլյամ Սարոյանի հետ այս հարցազրոյցը ձայնագրված է առավելաբար օգոստոս 9-ին, 1978-ին Վաշինգտոնում եւ ուրիշ առիթներով: Սա մի փոփոխուած է այն հարցազրոյցներից, որոնք ձայնագրված են Սարոյանի գիշերվայի ընթացքում, նրա տան մեջ՝ Ֆրեզնոյում, երբեմն Լոս Անջելոսում, երբեմն ծաւարանում, երբեմն իմ նստարանում: Ավելի քան 30 ժամանց այս զրույցները եղել են ընդհանրապես անգլերեն լեզվով՝ տեղ-տեղ մի քանի բառ հայերենով՝ մի օր ամբողջությամբ հրաւարակելու առաջադրությամբ:

- Գրելը ինչ՞ն է ձեզի համար:

- Շունչ առնելու չափ հետ է, ինչպես վկայ: Տարիներ տեւեց մինչեւ որ լեզուս եւ ափխաւելու ձեւս գտայ: Երբ սուտ խմելն ու ծխելը դադրեցուցի՝ անհրաժեշտ էր նաեւ փոխել ափխաւանքային սովորությունս (ձեւը): Ժամանակին ես կարող էի ափխաւել ահռելի ճնշումի տակ: Օրական երեքն չորս տուփ ծխախոտ կը գործածէի: Եօթ տարի առաջ թողեցի միկարդ, 1971ին (այս նախադասությունը հայերենով ըսաւ): Աշխատած էի իմ գրելու ափխաւանքի ձեւս փոխելու: Տես, բաւարարությունները կը գրէի եօթ օրուան ընթացքին, հիմա բաւարարություն մը գրելու համար 33 օր կ'առնէ: Բաներ կան որ փոխուած են:

- Գիտեմ որ գրեթէ ամէն օր կը գրէ: Վերջերս բաւարարություն գտա՞ ես:

- Օ՜, այո, անոյշամ, եւ ինչ կու տամ անոնցմէ մէկուն անունը All of Us Are Jackasses, Lifting Our Glasses. (Բոլորս ալ էշ ենք, երբ մեր բաժակները կը բարձրացնենք - անուշ անգլերենով կը հանգատուի եւ աւելի կը շեշտուի միտքը): Տեսա՞ծ ես մարդիկ երբ բաժակ կը բարձրացնեն: Խենդություն է, սուս-սուս բաներ կ'ըսեն: Խենդություն է, սուս կը խօսին (այս նախադասությունը հայերենով ըսաւ): Միւս բաւարարությունը գոր գրած եմ կը կոչուի Laughed At, որ կը խօսի հայերու կեցուածքին մասին, երբ կը փորձեմ բանակցիլ վերապրելի մէջ, երբ մեր վրայ ծիծաղեցան, եւ մենք ճաշկերոյթ մը կազմակերպեցինք իրենց համար եւ իրենց բրինձ կերցուցինք:

- Արտայայտութեան ո՞ր միջոցը կը նախընտրէք: Ո՞ր մէկը աւելի հետ է:

- Ոչ մէկ բան հետ է: Բայց ես բաւարարությունը կը սիրեմ: Որովհետեւ փոխանակություն է մարդոց, գաղափարներու եւ բառերու միջեւ: Ուրիշ խօսքով, հիմա ասիկա բաւարար է՝ երբ միասին կը խօսինք: Հիմա դուն կը նեռնուես դէմքերու տակը եւ արդէն կ'ունենանք բաւարար: Եթէ մէկը ինձի հարց տայ, թէ ի՞նչպէս բաւարար կը գրեմ, ես կը պատասխանէի «Գաղափար մը գտիր եւ յետոյ կազմատրէ զայն»: «Քու կեանքիդ ժամանակը» (The Time of Your Life) բաւարարություն մըն է, սեղանին նստած տղան ուրիշ տղու մը յանձնարարութեան կը դրէր: Սա անոր սկզբնատրությունն է: Մէկ հայլ առաջ կերթաս, եւ կը վերջացնես գործը:

- Ձեր բաւարարություններէն ո՞ր մէկը աւելի կը սիրէք:

- «Սիրտս Լեռներուն մէջն է»(My Hearts In the Highland), մերն է, ժողովրդական է, հայ է, ամերկացի է (հայերենով): Միջազգային է եւ համընդհանուր է:

- Ձեր ո՞ր պատմուածքը կը նախընտրէք:

- Առաջինը: «Յանդուգն երիտասարդը թռչող մարգածողին վրայ» (The Daring Young Man) առաջին կարճ պատմուածքս:

- Իսկ գիրքե՞ր:

- «Մարդային կապակցությունը» եւ «Որէ Ռակրամ»-ը, եւ անոնք, որոնք այժմ կը գրեմ: ...

- Դուք միշտ լաւատես էք: Բնաւ ատելություն չկայ ձեր երկերուն մէջ: Երբ կը սկսիք ատել:

- Դադրեցուս ատելությունը: Կ'ատես ցածրական կարմ, կ'ատես յաջողությունն հանդէպ յարգանքի բացակայությունը որ եւ ընտանիքի մէջ, եւ յետոյ մնացեալ մեծ ընտանիքին մէջ: Այնքան ատելությունը չէ, որքան գիտակցությունը անհերքելիության, կամ պակասին, կամ ծուլությունն կամ արհամարհանքին:

- Ո՞վ պատճառ եղաւ որ գրելու սկսիք:

- Կի Տը Մուպասանը: Իր պատմուածքներէն մէկը կարդացի, «Ջանգանը», որ ինձ սիրեց գրելու սկսիլ:

- Ինչ խորհուրդ կու տայիք նոր գրողներուն:

- Որեւէ գործունէություն, որ կ'ընդգրկէ կարողականություն, եւ մրցակցություն, մարդկային միտքին, հոգիին եւ ոգիին վրայ կը պարտադրէ ծանր պահանջներ: Այս ըսել կ'ուզեմ, երբ կ'ըսեմ դիտէն օգնություն չկայ: Կամ ունիս, կամ չունիս: Առաջին բանը, որ յայտնաբերեցի եւ հասկցայ, այն էր, որ ինչ որ ունէի՝ այդ ունէի հրամցնելու: Իմ ամբողջ կեանքիս ընթացքին ինձմէ դուրս չեմ նայած: Պէտք է որ ներսէն գայ, ու ներսիդիդ, ու փորձառութենէդ: Քու ինքնությունդ ափխաւելի մէջ ոչ մէկ կարգ ունի դուրսին հետ: Ամբողջ կեանքիս ընթացքին երբեք յանձնարարագիր չեմ ունեցած: Նիւ Եորք կը խորհին, թէ իմ լաւագոյն գործս «Նամակներ 74 թաղամասի փողոցէն» գիրքն է, որ 31 նամակներ ունի ուղղուած ընկերներու, բայց իրականությեան մէջ ամբողջությունը ընդունուած է: Ուրիշներ կը կարծեն, թէ «Մարդկային կապակցությունը» լաւագոյնն է:



- Ո՞ր հեղինակները կը սիրէք:

- Քանի մը հաս: Շեքսպիր Անտրուսը, Ուիլիամ Ֆոլքնր, Հեմինկուէյ, Եմիլ Լանտրն, Տրայզր, Սինքլէր Լուիս, Օ'Հենրի, Ճան Օ'հարա, Թոլսթոյ, Չեխով, Տոսթոեւսքի, Նորուա, Մորավիա, Մուիասան, եւ քանի մը ուրիշներ:

- Եւ հայ մտակոյքէ՞ն:

- Կը սիրեմ Չարենցը, Մեսարենցը, Պետրոս Դուրեանը, Վահան Թէքէեանը: Անշուշտ Նարեկացին մեծագոյնն է հայ ժողովուրդէն: Իսկ ժամանակակիցներէն՝ Շիրազ, Սեւակ, Վահագն Դաւթեան եւ Ռազմիկ Դաւոյեան: Դաւոյեանի «Ռեքուիէմ»-ը ուշագրաւ գործ մըն է: Դաւոյեանին ըսի, որ այդ գործէն բաւարարություն մը ստեղծէ:

- Հայ գրողներէն որո՞նց հանդիպած էք:

- Առաջին հայ գրողը որ գիտեմ, ինձի համար մեծ մարդ մըն է: Իսկապէս մեծ մարդ է, եւ անիկա Վահան Թոթովենցն է: Իրեն հանդիպեցայ 1935-ին: Չարենցին Հայաստան գացի օթոմիւսով տակաւին խան տարեկան չեղած: Աշխատեր եմ ճանապարհածախսիս համար: Դիտութեամբ հանգստաւէտ կեանքի կամ հարստության հասնիլը անհանցի մը կարողության մասին սխալ կարծիք կը յառաջացնէ:

- Սակայն գործնական աշխարհի մէջ գիտենք, որ ընկերներ ունենալու ես, որպէսզի քեզ յառաջ մղեն:

- Ամերիկացի գրող Էմերսընէն լսած եմ բարեկամության կարեւորության մասին եւ շատ սխալ պիտի ըլլար ոեւէ մէկուն համար իր ընկերները դրժել: Բայց ու միակ ընկեր դուն ես:

- Գրողները ե՞րբ ըսելիք կ'ունենան:

- Երբ երիտասարդ ես եւ իսկապէս պատասխան մը կու տաս ամէն առութագէտի սիրտին մէջի գոյությունն ունեցող խորունկ կասկածներուն: Պիտի հարցնես՝ արդեօք ես այն աղնիւ եմ, որ իրաւունք ունի իր ընտիրը ուրիշին պարտադրելու: Ես այդման լաւն եմ: եւ հետեւորդ տեղեկությունը գացի օթոմիւսով տակաւին խան տարեկան չեղած: Աշխատեր եմ ճանապարհածախսիս համար: Դիտութեամբ հանգստաւէտ կեանքի կամ հարստության հասնիլը անհանցի մը կարողության մասին սխալ կարծիք կը յառաջացնէ:

- Սակայն գործնական աշխարհի մէջ գիտենք, որ ընկերներ ունենալու ես, որպէսզի քեզ յառաջ մղեն:

- Ամերիկացի գրող Էմերսընէն լսած եմ բարեկամության կարեւորության մասին եւ շատ սխալ պիտի ըլլար ոեւէ մէկուն համար իր ընկերները դրժել: Բայց ու միակ ընկեր դուն ես:

- Գրողները ե՞րբ ըսելիք կ'ունենան:

«**Ազգ**» դեռեւս հունիսի 3-ի համարում «Սասունցիները հայերի միություն են ստեղծել Թուրքիայում» վերնագրով նշել է, որ նրանք պահանջում են իրենց իրավունքների վերականգնումը Սասունի հայկական եկեղեցիների եւ գերեզմանների վրա: Եկեղեցիների պարագայում խոսքը Մարութա սարի Սուրբ Պետրոս առաքյալի վանքի եւ Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին է, իսկ գերեզմանները պատկանում են Գոմի եւ Արծվիկ գյուղերին:

Հարցազրույցի համար հիմք է ծառայել թուրքական ATV հեռուստատեսության կայքէջը, որն իբրեւ սկզբնաղբյուր օգտագործել է ներկայումս Սասունը ներառող Բաթմանի վիլայեթի տեղական «Բաթման փոստ» թերթի մայիսի 26-ի համարը: «Բիթլիսի, Բաթմանի, Մուշի, Վանի վիլայեթների, գյուղերի եւ գավառների հայ սասունցիների սոցիալական փոխօգնության, մշակույթի եւ համերաշխության» միությունը թեեւ 2006-ին Սամսունում է ստեղծվել, սակայն նրա նախագահ Ազիզ Դաղջը եւ մյուս ղեկավարները բնակվում են Բաթմանում: Հետաքրքրական է, որ նրանց թուրքական անուն-ազգանունները ամենեւին չեն խոչընդոտում, որ հավատարիմ մնան իրենց հայկական ինքնությանը եւ պահպանեն դա:

Միության հարցին «Անատոլիայի հայերը հարգանք են պահանջում սեփական արժեքների նկատմամբ» վերնագրով «Էվրենսել հայաթ» հանդեսի հունիսի 30-ի համարում անդրադարձել է Էլիֆ Գյորգունը: Նա հոդվածին ծանոթացել եմ Սամսունի «Հայաթերթ» կայքէջում: Գյորգունը հոդվածն սկսում է հետեւյալ կերպ. «Անատոլիայում մահմեդական ծերունին Հրանտ Դինքին հարցրել է հայերի թողած ոսկիների ու գանձերի մասին, իսկ նա պատասխանել է. «Կան, բա գանձեր կան, բայց ոչ թե հողի տակ, այլ գետնի վրա: Այդ գանձերը մարդիկ են»: Տավոր, խարականության դրսեւորումն այնպիսի իրավիճակ է ստեղծել երկրում, որ դարեր շարունակ միենույն հողում բնակվող ժողովուրդներից մեկը կարողանում է անտեսել մյուս ժողովուրդների մշակութային, պատմական կամ հոգեւոր արժեքները»:

Այնուհետեւ հոդվածագիրը հակիրճ ներկայացնում է «Հայ սասունցիների միության» ստեղծման պատմությունը, նշում է, որ հիմնադիրների ճնշող մեծամասնությունն ունեն Սասունում բնակվող նաեւ ազգականներ, առայսմիս է նրանց անունները՝ Ազիզ Դաղջը, Էրալ Յըլըդըրմ, Ռահիֆ Յըլըդըրմ, Բահրի Գեզ, Էսսո Օչալ, Խալլատուր Քեբաբջը եւ Տիգրան Դեմիրջի:

Գյորգունը, պայմանավորելով միության ստեղծումը «հայրենի հողի ազգային արժեքները փրկելու» հայ սասունցիների նպատակամղվածությամբ, շարունակում է. «Հայ են եւ հանկարծ հեռանում են լինում իրենց իրավունքների վերականգնմանը: Ծանր գործ է: Հայ հոդվածագիրն անտեսման պատճառը պարզաբանելու համար դիմում է միության հիմնադիրներից Էրալ Յըլըդըմին եւ ստանում հետեւյալ պատասխանը. «Ժամանակին (1915-ին) գյուղում հայտնված նոր աղաները մեզ՝ հայերիս բաժանել են միմյանց մեջ: Մեր ընտանիքի եւ Ազիզ եղբոր ընտանիքի աղաները տարբեր են: Քանի որ այդ տարիներին փրկել են մեզ, ուստի մեր սեփականությունը համարում են իրենցը: Եթե մենք թողնենք-հեռանանք, այդ մեր ունեցվածքը իրենց է մնալու: Այդ աղաները նույնիսկ մեզ են համարում իրենց սեփականությունը եւ անհարգալից վերաբերմունք են ցուցաբերում մեր եկեղեցիների եւ գերեզմանների նկատմամբ: Երբ գյուղում մեր պապերն էին բնակվում, մահմեդականներ չկային: Հետո են եկել, հաստատվել: Ասում են, որ հիմա հայ չի մնացել, ինչպես թե: Չէ՞ որ մեր եկեղեցիները հազարամյա պատմություն ունեն: Մնացել են նաեւ մեր գերեզմանները, չենք ուզում, որ կորչեն գնան: Եթե աղաները ժամանակին փրկել են մեզ, այդ միայն այն բանի համար, որ մենք արհեստավորներ ենք եղել, որոնց խիստ կարիքն են ունեցել: Այնուամենայնիվ փրկելու համար երախտապարտ ենք, սակայն արհամարհանքը վշտացնում է: Իրականում մասնատվել են նաեւ մեր ընտանիքները: Մի մասը մնացել է Իրանում, մյուսը՝ մահմեդականություն ընդունել: 1915-ից ի վեր մեր գյուղը Բահանայի երես չի տեսել: Չենք կարողանում կնքել մեր երեխաներին: Կնքվելու եւ պսակադրման համար սխրված հասնում ենք Սամսուն: Մենք չենք հեռացել Սասունից, որպեսզի կան ընտանիքներով բնակվող հայեր: Բիթլիսում 8 գյուղ ունենք, որոնց մի մասը գրանցված է իբրեւ մաքառուս: Որքան էլ ավերված լինեն, ունենք հարյուրավոր եկեղեցիներ: Ամեն տարի հուլիսի 25-ին ուխտագնացություն ենք կատարում Մարութա սար: Սուրբ Աստվածածին եկեղեցին այնտեղ է: Հիմա ախոռի է վերածված: Բուլդոզերներով քանդում են մեր գերեզմանները եւ կադաստը իբրեւ գերեզման չի գրանցում: Բայց ես սասունցի եմ, չեմ թողնի իմ գերեզմանը»:

ՀՐԱՆՏ ՉԵԼԵՔՅԱՆ,

Ամազոնն այնուամենայնիվ ամենաերկար գետն է

Բրազիլիայի տիեզերական հետազոտությունների ազգային կենտրոնի հաղորդման համաձայն, Ամազոնն այնուամենայնիվ աշխարհի ամենաերկար գետն է:

Կենտրոնի փորձագետներն արբանյակային տվյալների հիման վրա ուսումնասիրել են Ամազոնի հոսանքը: Իրենց հաշվարկներում նրանք հիմք են ընդունել անցյալ տարի Բրազիլիայի եւ Պերուի գիտնականների իրականացրած գիտարշավի արդյունքները: Այն ժամանակ գիտնականները հասել էին Ամազոնի ակունքին, որը գտնվում է Պերուական Անդերում, 5000 մետր բարձրության վրա:

Փաստորեն առաջին անգամ լուծվել է աշխարհագրական մեծագույն առեղծվածներից մեկը՝ հայտնաբերվել է այն վայրը, որտեղից սկիզբ է առնում Պերուն, Կոլումբիան եւ Բրազիլիան հատող ջրառատ Ամազոնը: Անցյալում կարծում էին, թե գետի ակունքը գտնվում է Պերուի հյուսիսում, բայց պարզվում է, որ հարավում է:

Գիտնականների տեղակայած արբանյակային փարոսները զգալիորեն դյուրացրել են նրանց խնդիրը: Բրազիլիայի տիեզերական հետազոտությունների ազգային կենտրոնի հետազոտությունների համաձայն, Ամազոնի երկարությունը 6992,06 կմ է, Նեղոսից (6852,15 կմ) 140 կմ-ով ավելի:



Այսպիսով, Ամազոնը մոլորակի ոչ միայն ամենաջրառատ, այլեւ ամենաերկար գետն է:

ՄԻՆՍԿ

Պայթյուն տոնական համերգի ժամանակ

Բելառուսի անկախության օրվա առիթով երեկ գիշեր մայրաքաղաք Մինսկի կենտրոնում տեղի ունեցած բացօթյա համերգի ժամանակ որոտացել է պայթյուն: Վիրավորվել է 50 մարդ: Ոմանց վիճակը ծանր է: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը, վկայակոչելով Բելառուսի պաշտպանության նախարարության ներկայացուցիչներին:

Նրանց խոսքերով, հիվանդանոցներում առնվազն 47 վիրավոր կա: Նրանց մեծ մասը ստացել է ծեղերի եւ աչերի վնասվածքներ:

Պայթյունը տեղի ունեցել «Հերոս քաղաք Մինսկ» հուշարձանի մոտ՝ Հաղթողների եւ Մաշերովի պողոտաների խաչմերուկում: Իրավապահների հարարակած նախնական տվյալների համաձայն, պայթուցիկ սարքի մեջ եղել են հեղույսներ եւ պտուտակներ:

Մինսկի ՆԳԳՎ պետ, գեներալ Անատոլի Կուլեշովը հայտարարել է, որ խոսքն այն անձանց «խուլիգանության» մասին է, ովքեր դժգոհ են Մինսկում գեղեցիկ տոնի անցկացումից:

Միջադեպի փաստի առթիվ հարուցված է քրեական գործ: Պայթյունի կազմակերպիչներին փնտրում են գլխավորապես տուժածների մեջ:

Չնայած պայթյունին, համերգը շարունակվել է, նշում է Ռոյթեր գործակալությունը:

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ներկա է եղել միջոցառմանը եւ այցելել է պայթյունի վայր: Նա որոշել է անձամբ վերահսկել գործի քննությունը:

Բրիտանացիների համար 3 գլխավոր վտանգներն են «Ալ Ղաիդան», Իրանը եւ Ռուսաստանը

Մեծ Բրիտանիայի անվտանգության ծառայությունները Ռուսաստանը համարում են երկրին սպառնացող երրորդ մեծ վտանգը: Այդ մասին հայտնի է դարձել ՌԴ նախագահ Մեդվեդեւի Լոնդոն կատարելիք այցի նախօրեին: Լոնդոնի «Թայմս» թերթը գրում է, որ անվտանգության ծառայությունները բրիտանացիներին սպառնացող առաջին երկու գլխավոր վտանգներն են համարում «Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցը եւ Իրանի միջուկային ծրագիրը:

Անվտանգության բրիտանական ծառայությունները երկյուղներ ունեն, որ Ռուսաստանի գլխավոր հետախուզական գործակալությունները Մեծ Բրիտանիան հեղեղել են գործակալներով:

Բրիտանացիները դժգոհ են, որ հարկ է լինում կենսականորեն կարեւոր ռեսուրսներն օգտագործել ռուսների արդյունաբերական եւ ռազմական լրտեսության դեմ պայքարելու նպատակով: Վերջին օրերին աճում է դժգոհությունը նաեւ օտարերկրացի ներդրողների, մասնավորապես «Բրիտիշ փեթրոլիում» նավթային ընկերության նկատմամբ Ռուսաստանում վարվող հաղթականությունից: BBC-ն երեկ հաղորդեց, որ վարչապետ Վլադիմիր Պուտինը որոշել է հարկատու դարձնել արտերկրից դրամաշնորհներ ստացող միջազգային կազմակերպություններին (բնապահպաններ, Կարմիր խաչ եւ այլն):

Իսրայելի վարչապետը կոչ է անում Սիրիայի հետ ուղղակի երկխոսությանը

Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտը Սիրիայի հետ ուղղակի երկխոսություն սկսելու կոչ է արել: Ներկայումս երկու երկրներ դիվանագիտական շփումներն իրականացնում են Թուրքիայի միջնորդությամբ: Միջնորդ երկում Սիրիա-Իսրայել բանակցությունների հերթական փուլը տեղի կունենա օգոստոսին, հաղորդում է ԻՏԱՐ-ՏԱՍՍ գործակալությունը:

Էլյաթ քաղաքում կազմակերպված տնտեսական կոնֆերանսում վարչապետ Օլմերտը հայտարարել է. «Սիրիացիների հետ մենք լուրջ խոսակցություն ենք սկսել: Իմ գնահատմամբ, շատ շուտով բանակցությունները պետք է դառնան անմիջական»:

«Խնդիրներն այնքան բարդ չեն, որքան թվում են», ավելացրել է Օլմերտը՝ ընդգծելով, որ Սիրիայի հետ հաշտության համաձայնագրի կնքումը շատ կարեւոր հետեւանքներ կունենար Իսրայելի անվտանգության համար: «Կարծում եմ, նման հայտի ռազմավարական նշանակությունը չի կարելի անտեսել», ասել է վարչապետը:

Սիրիա-Իսրայել ուղղակի բանակցությունները վերջին անգամ ընդհատվել էին 2000 թվականին, Իսրայելի օկուպացրած Գոլանի բարձունքների հետ կապված տարաձայնությունների պատճառով: Սիրիան պահանջում է վերադարձնել այդ տարածքը:

Օլմերտն առայժմ չի խոսանում վերադարձնել Գոլանի բարձունքները: Որպես հաշտության համաձայնագրի կնքման պայման, Իսրայելը Սիրիայից պահանջում է խզել կապերը Իրանի, Լիբանանյան «Հզբոլլահ» եւ պաղեստինյան «Համաս» արմատական շարժումների հետ:

Մշակույթ

Էմիլ Գազազի հորինվածքների երևակայական աշխարհը

Ժամանակակից արվեստի թանգարանի նորակառույց տաճի առաջին հարկում շարունակվում է ծնունդով գյուղացի Էմիլ Գազազի գեղանկարչական ափսեաանների ցուցադրությունը: Տարիներ առաջ նա ադրում եւ աշխատում է ԱՄՆ-ում: Գազազի երեւանյան նախորդ ցուցահանդեսը «Արամ» դպրոցասրահում էր: Այս վերջինը շատ ավելի շահեկան է ոչ միայն խանկական, ծավալաբոնզ) ժանրում: Դանվի հիմնականում փորձարարվել են՝ տեսված արտահայտչաձեւերով, զգացմունքի տրավորիչ ցուցադրությամբ, ինչպես, օրինակ, կիրի՝ «Վայրի սեր» աշխատանքում: Կերպարային ընդգծվածությամբ այդի է ընկնում «Հոտիթը»՝ հաղթողի ինքնաբավ գոհունակությամբ, վանիչ մեծամտությամբ, անհոգտես դեալների տեսվածությամբ: Ցուցադրվածներից ամենախոսը այս գործը ժամանակակից արվեստի թանգարանին նվիրել է Լոս Անջելեսից Գրիգոր Մուրադյանը: Հետաքրքրական են «Այծեմարդ», «Խնձորով մարդ», «Թագուհու նավը» գործերը:

Գազազի գեղանկարչության հանդեպ վերաբերմունքը ըստ դիտորդի նախասիրության, կարող է լինել շատ հակասական՝ գեղագիտական ընկալման տեսակետից: Կյանքի ձեւերի անբնական միակցումները եւ կերպախեղումները մարդկային բնույթի անկատարության հետեւանք է, կոնտրաստները՝ մտածողական եւ գունային, ավելի ցայտուն են, շատ ավելի փիչ է նեղությունակ մթնոլորտը («Ընտանիք»): Պակերեսի ինչ նաեւ արվեստագետի նկարչական մտածողությանը ծանոթանալու տեսանկյունից: Ներկայացման էմոցիոնալությունը հնարավորություն է տալիս հստակ ընկալելու նրա գեղանկարչական եւ խորհրդանշային մտի մոտիվացիան՝ ֆանտազիայի աշխարհը: Թանձր վրձնահարվածներով, մուգ գունային շերտերով յուրաքանչյուր գործերն ավելի տիրապետող են: Գազազի արվեստային մտածելուն առհասարակ բնորոշ է գեղարվեստի մեջ ընդունված ժամանակային դպրոցականությունների կիրառումը, այսպես կոչված «տեղափոխությունները»: Պատմական անցյալը ներկային միաձուլված միաձույլ, միֆական կերպարները յուրահատուկ մոտեցում է աշխարհի անընդհատական փոփոխություններին: Կերպարային ձեւախեղումները «անցնում են» մարդկության վաղագույն շրջանի կոմունիստական դպրոցական դրսեւորումների միջով՝ արտահայտելով դեֆորմացված, աղճատված փոխհարաբերություններ: Ուստ հայտնվում, ընդգծված կեցվածքով բազմազան ֆիգուրները դրսեւորված են բատերայնությամբ, երբեմն՝ ծիսականության մեջ: Իր նկարչական հորինվածքին, բազմաբնույթ դերասանական ամենից հակասականը հեգնախառն մթնոլորտն է: Թեմատիկ առումով նրան սնում է հին ավանդի «մարդաբանության» դպրոցությունը՝ միախառնված միֆոլոգիային: Մարդու դեռեւս «չմաղակոված» դրդումները, վայրի, անբռնազբաս դպրվածը, բիրտ ինքնավստահությունը, տոտեմիզմին հատուկ տարրերը՝ կենդանական աշխարհի բնաջին մտերմությամբ, արտահայտված են բազմաթիվ կտավներում («Խոսող ձուկ», «Ցեզ», «Կարդալ ոչխարի գլուխ»): Մարդու անօգնական վիճակը՝ բախվելի նուրբ գույներով առկա է «Օգնություն», «Սուրբ Անտոնիոյի կանչը», «Լավանոյի երգիկը» եւ այլ գործերում: Դանվի շատ ավելի թեթեւ են դիտվում գրաֆիկական աշխատանքներում: Էմիլ Գազազի գեղագիտությունը առավել արտահայտված է հանդակի (նյութը՝ բամբակ) ժանրում: Դանվի հիմնականում փորձարարվել են՝ տեսված արտահայտչաձեւերով, զգացմունքի տրավորիչ ցուցադրությամբ, ինչպես, օրինակ, կիրի՝ «Վայրի սեր» աշխատանքում: Կերպարային ընդգծվածությամբ այդի է ընկնում «Հոտիթը»՝ հաղթողի ինքնաբավ գոհունակությամբ, վանիչ մեծամտությամբ, անհոգտես դեալների տեսվածությամբ: Ցուցադրվածներից ամենախոսը այս գործը ժամանակակից արվեստի թանգարանին նվիրել է Լոս Անջելեսից Գրիգոր Մուրադյանը: Հետաքրքրական են «Այծեմարդ», «Խնձորով մարդ», «Թագուհու նավը» գործերը:

Գազազի գեղանկարչության հանդեպ վերաբերմունքը ըստ դիտորդի նախասիրության, կարող է լինել շատ հակասական՝ գեղագիտական ընկալման տեսակետից: Կյանքի ձեւերի անբնական միակցումները եւ կերպախեղումները մարդկային բնույթի անկատարության հետեւանք է, կոնտրաստները՝ մտածողական եւ գունային, ավելի ցայտուն են, շատ ավելի փիչ է նեղությունակ մթնոլորտը («Ընտանիք»): Պակերեսի ինչ նաեւ արվեստագետի նկարչական մտածողությանը ծանոթանալու տեսանկյունից: Ներկայացման էմոցիոնալությունը հնարավորություն է տալիս հստակ ընկալելու նրա գեղանկարչական եւ խորհրդանշային մտի մոտիվացիան՝ ֆանտազիայի աշխարհը: Թանձր վրձնահարվածներով, մուգ գունային շերտերով յուրաքանչյուր գործերն ավելի տիրապետող են: Գազազի արվեստային մտածելուն առհասարակ բնորոշ է գեղարվեստի մեջ ընդունված ժամանակային դպրոցականությունների կիրառումը, այսպես կոչված «տեղափոխությունները»: Պատմական անցյալը ներկային միաձուլված միաձույլ, միֆական կերպարները յուրահատուկ մոտեցում է աշխարհի անընդհատական փոփոխություններին: Կերպարային ձեւախեղումները «անցնում են» մարդկության վաղագույն շրջանի կոմունիստական դպրոցական դրսեւորումների միջով՝ արտահայտելով դեֆորմացված, աղճատված փոխհարաբերություններ: Ուստ հայտնվում, ընդգծված կեցվածքով բազմազան ֆիգուրները դրսեւորված են բատերայնությամբ, երբեմն՝ ծիսականության մեջ: Իր նկարչական հորինվածքին, բազմաբնույթ դերասանական ամենից հակասականը հեգնախառն մթնոլորտն է: Թեմատիկ առումով նրան սնում է հին ավանդի «մարդաբանության» դպրոցությունը՝ միախառնված միֆոլոգիային: Մարդու դեռեւս «չմաղակոված» դրդումները, վայրի, անբռնազբաս դպրվածը, բիրտ ինքնավստահությունը, տոտեմիզմին հատուկ տարրերը՝ կենդանական աշխարհի բնաջին մտերմությամբ,

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի մեկնարկը՝ գրողների համահայկական 4-րդ համաժողովով

Երեկ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը ասուլիսի ընթացքում նեց, որ Գրողների 4-րդ համահայկական համաժողովով կնքվի «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի մեկնարկը հուլիսի 7-ին, որին անմիջապես կհետեւի «Ոսկե ծիրան» ամենամյա կինոփառատոնը, այնուհետեւ՝ բատերական փառատոնը, մշակութային ժառանգության, ժուռնալիստիկայի համաժողովները: «Այսօր մեկ կատարողական խնդիր է դրված «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի առջեւ՝ որպեսզի կայանան համահայկական ծրագրերը բոլոր ոլորտներում: Դրանց նախաձեռնները կարծես թե արդեն կան եւ արդյունքում կունենանք համահայկական մի ծրագիր, որտեղ համախմբված կլինեն բոլոր բնագավառները», նեց Նախարարը: Փառատոնի ձեռքբերումներից է «Գրի համահայկական առաջին տոնավաճառը», որը կլինի ամենամյա: Այսուհետեւ տարին երկու անգամ՝ հուլիսին եւ հոկտեմբերին կանցկացվեն հայ գրի ու բարգմանական գրի ցուցահանդես-տոնավաճառներ, որոնք կնպաստեն գրող եւ հրատարակիչ կապերի ամրապնդմանը:

Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը լրագրողներին ծանրամասն տեղեկատվություն տվեց գրողների 4-րդ համահայկական համաժողովի մասին եւ հաստատեց կարտուրեց, որ այն անց է կացվում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում ու ֆինանսավորվում է կառավարության կողմից (18 միլիոն): ՀԳՄ-ն, Արցախի իշխանությունները նաեւ իրենց աջակցությունն են գուրարել հաստատվածին, որպեսզի երեւանում, Ծաղկաձորում ու Արցախում անցկացվող համաժողովի պատվիրակները կարողանան համաձեռ կարտուրագույն հարցեր քննարկել ու դրանց լուծումների բանալին գտնել: Արդեն ժամանում են սփյուռքից հայտեր ներկայացած մոտ ինը տասնյակ գրողներ, որոնց շարքում 27-ը երիտասարդ գրողներ են, ովքեր տարբեր համայնքներում քարոզում են հայրենիքի ու հայրենասիրության գաղափարը: Ինչպես նեց Անանյանը. «Սփյուռքյան գրական կապերը շատ կարեւոր արդյունքներ են տվել: Եթե նախորդ համաժողովները ունեին ճանաչողական բնույթ, գրական ունեցվածքի գուրագրման բնույթ, այժմ շատ ավելի խորքային հարցեր են արծարծվում: Կարողացել ենք ստեղծել սփյուռքի հայոց գաղթօջախներում կառույցներ, միություններ, մասնաճյուղեր (Իրան, Լիբանան, Սիրիա, ԱՄՆ), որոնց հետ ակտիվորեն համագործակցում ենք: Արդյունքում՝ հայ գրողները գեղադասում են իրենց գործերը տպագրել Հայաստանում»: Անանյանը ցավով նեց, որ շատ գաղթօջախներում, հատկապես Եվրոպայում եւ ԱՄՆ-ում երիտասարդ գրողներ չկան: Բացառություն են կազմում Թեհրանը, Բեյրութը եւ Հալեպը. «Մշակույթի նախարարի առաջարկով համաժողովի ծրագրում ներառվեց «Սփյուռքահայ երիտասարդ գրողների խորհրդաժողով», որի ընթացքում կքննարկվեն «Գրական նոր սերունդը եւ 21-րդ դարի մարտահրավերները» թեմայով հարցերը, տեղեկացրեց ՀԳՄ նախագահը:

Նա հույս հայտնեց, որ որոշ ժամանակ անց Հայաստանը կկարողանանք դարձնել գրի միջազգային ցուցահանդեսների երկիր ու մեր ընթերցասերներին եւ գրասեր ժողովրդին կվերադարձնենք ընթերցանության ավանդույթը:

Մ. ՄԱՐՏԵՍՅԱՆ

«Հուշի» պարախմբի 15-ամյակի տնտակատարությունը Երեւանում

Նյու Յորքի (ԱՄՆ) սուրբ Վարդան Մայր տաճարի «Հուշի» պարախումբը հիմնադրվել է 1992-ին գեղարվեստական ղեկավար ու բալետմայստեր Սեդա Պասկալյան-Քանդարջյանի ջանքերով: Սկզբնական շրջանում պարային համույթը բաղկացած է եղել մի խումբ պատանիներից, որոնք Հայաստանի տահմանների դուրս ներկայացրել են հայ մշակույթը: Իսկ երբ հեռավոր Ամերիկայում լուր է հասնում, որ Արցախի սիրտը՝ Հուշին ազատագրվել է ազերիներից, հայրենասեր մի խումբ պատանի ու ավագ սերնդի ներկայացուցիչներ ոգեւորված որոշում են, հատուկ նախապատրաստվում ու 1995-ին՝ Հուշիի ազատագրման 3-րդ տարեդարձի առիթով հայկական պարախումբը անվանում «Հուշի»:

15 տարվա ճանապարհ անցած պարախումբը մեծ ճանաչում է ձեռք բերել՝ բազմաթիվ հյուրախաղեր տալով տարբեր երկրներում ու մշտապես արժանացել ներկաների ջերմ ընդունելությանը՝ հայ արվեստն ու մշակույթը արժանավայել ներկայացնելու համար: Նշենք, որ համույթի 110 սաները 5-25 տարեկան են եւ նրանց մեջ խանդավառությունը երբեք չի թուլանում, այլ ընդհակառակը, ընդլայնում են շրջագայությունների աշխարհագրությունը: «Հուշի» պարային համույթը բազում ելույթներ է ունեցել թե՛ հայ, թե՛ օտար հանդիսատեսի առջեւ՝ Կանադայում, ԱՄՆ-ի տարբեր նահանգներում եւ այլուր: Պարախմբի երազանքը մշտապես եղել է մայր հայրենիքում հանդես գալը: Եվ ահա նրանց երազանքը իրականացավ 2000-ին, երբ խոր Վիրապում իրենց համերգը նվիրեցին հիսունհնությունը Հայաստանում պետական կոչ հոչակելու 1700-ամյակին, իսկ 2005-ին՝ Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին: Հայկական պարախումբը համերգային ծրագրով բազմիցս հանդես է եկել երգիչներ Պարոնի Պողոսյանի, Հուլան Պետրոսյանի, Տիգրան Պետրոսյանի եւ այլոց հետ: Իսկ 2006-ին Փասադենայում ու Կալիֆորնիայում «Հուշի» պարախումբը հատուկ համերգային ծրագիր է պատրաստել ու նվիրել Թեֆեյան մշակութային միության 60-րդ տարեդարձին, որին մասնակցում էին երգիչներ Հովիկ Գրիգորյանը, Սալոմի Մայիլյանը, Հերմինե Թումանյանը, Ռուբեն Թելունցը, Արմեն Հովհաննիսյանը, բանաստեղծուհի Նունե Ավետիսյանը:

2007-ի սեպտեմբերին Բրազիլիայի «Միլենիում» թատրոնում «Հուշի» պարային համույթի համերգը նվիրված էր իրենց գործունեության 15-ամյակին, իսկ հոկտեմբերին Նյու Յորքում «Հայաստան» հիմնադրամի 15-ամյակին նույնպես մի հրաբալի համերգ էին նվիրել:

Հայաստան երրորդ այցը նվիրված էր հենց «Հուշի» պարախմբի 15-ամյակին: Հուլիսի 3-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմը լեցուն էր հանդիսատեսներով: Տոմսերը մի քանի օր առաջ արդեն սպառվել էին եւ մեծ դժվարությամբ կարողացա երկու տոմս գտնել: Հաջորդ օրը միայն **«Ազգը»** ստացավ հրավեր ու մասնակցեց համերգին: Պետք է ասեմ, որ գեղեցիկ կազմակերպված համերգային շատ խիտ ծրագիրը թերեւս կարելի էր մի քիչ կրճատել, քանզի մոտ 4 ժամ շատ դժվար է ամառվա շոգին դիմանալ: Հայկական պարի էլեմենտները պահպանված, նազանոթով ու հեզությամբ իրար էին հաջորդում պարերը, որոնք զուգահեռաբար ընթանում էին անվանի հայ երգիչներ Հովիկ Գրիգորյանի, Սոսե Մարտիրոսյանի, Արմեն Հովհաննիսյանի, Հերմինե Ամիրյանի, Սալբի Մայիլյանի, Լեյլա Մարիբեկյանի հրաբալի կատարումներով: Համերգին ելույթ ունեցավ նաեւ Նյու Յորքի օպերային թատրոնի երգիչ Վաղարշակ Օհանյանը եւ ասմունքող Անահիտ Իշկանյանը: Համերգին բազմաթիվ հյուրեր ու օտարերկրացիներ էին եկել: Ներկա էին նաեւ ՀՀ ԱԳ սփյուռքի հարցերով կոմիտեի նորանշանակ նախագահ Հրանուշ Հակոբյանը, գրականագետ, ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական Երվանդ Ազատյանը: Ցավոք, համերգի ծրագիրը տրված էր անգլերենով եւ ներկաներին այդ փաստը վրդովեցրեց, քանզի ՀՀ-ում պետական լեզուն հայերենն է:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանու ներքո Նյու Յորքի ս. Վարդան մայր տաճարի «Հուշի» պարախմբի մի քանի տասնյակ սաներ՝ 7-25 տարեկան, հայրենի բեմում, չնայած սիրողական մակարդակին, մեկ անգամ եւս առաջացրեցին, որ զորու են մշտապես վառ պահել հայրենի մշակույթի նկատմամբ հատուկ սերն ու ջերմությունը, օտար ափերում հայեցի դաստիարակվել ու այն փոխանցել սերունդներին:

Մարիետա Մուրադյան

Դիմանկարն արդիականության եւ նորարարության մեջ

ՆՓԱԿ-ի երեկվա ցուցահանդեսի նյութակն էր ի մի բերել 90-ականներից մինչ օրս ձեւավորված դիմանկարային գարգացումները, որոնք արվեստագետների եւ նորարար կենտրոնների համագործակցության արդյունք են:

«Ինչ է դիմանկարը՝ հիշողություն, ճանաչելիության փաստ, ակամաս, ժամանակի հավաքական կերպար, թե՛ պարզապես պատկեր, որի միջոցով երեւակայությունը հնարավորություն է ստանում կառուցել ինչ-որ միջավայր, ժամանակ», ասաց ցուցահանդեսի համադրող Արեւիկ Արեւշատյանը՝ հավելելով, որ արվեստն անհատական, անստանդարտորեն ճանաչելի կերպարների, դիմանկարների կարիք է զգում: Ցուցահանդեսում ներկայացված կերպար-արվեստը հետաքրքրական է ու տպավորիչ:

Որպեսզի սեւագրեմ մոր վախվորած հայացքը, հեկեկացող կնոջ աչքերի ու դողդողացող շուրթերի, մինչեւ խելագարության սահմանը հասող տրամադրու աչքերի արտահայտությունը դիտողների մոտ առաջացնում է զգացողություն, որ նման է փշաքաղության կամ զառանցի: Արվեստագետները կարծես փշում են նախկին կարծրացած պատկերացումները դիմանկարի մասին՝ ստեղծելով ընդհանրացված սոցիալական բողոքի պատկեր:

< <

Աբրամովիչը հրավիրում է Արշավինին, «Չենիթը» նոր պայմանագիր է առաջարկում

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունում ՌԴ հավաքականի եւ «Չենիթի» հարձակվող Անդրեյ Արշավինի խաղը գրավել էր առաջատար մի քանի թիմերի մարզիչների ուշադրությունը: Լրատվամիջոցները շտապեցին հայտնել, որ «Բարսելոնը» պատրաստ է 15 մլն եվրո վճարել Արշավինի տեղափոխման դիմաց: Շատերը թերահավատորեն վերաբերվեցին այդ տեղեկատվությանը, քանի որ Արշավինը բնավ էլ առաջին մեծության «աստղերի» շարքին չի դասվում: Ճիշտ է, «Չենիթի» ղեկավարությունը հաստատել է «Բարսելոնից» նման առաջարկ ստանալու փաստը:

Ստեղծված իրադրության վրա լույս է սփռում օրերս իսպանական El Mundo Deportivo թերթում հրապարակված հոդվածը: Հոդվածագիրը հաստատում է, որ «Բարսելոնի» նախագահ Ժոան Լապորտան հրահանգել է չշտապել Արշավինի հարցով բանակցություններում: Ակումբի համար ներկայում առաջնահերթը Լոնդոնի «Արսենալի» հարձակվող Էմանուել Ադեբայորի եւ կիսապաշտպան Ալեքսանդր Գլեբի ձեռքբերումն է:

Արշավինը որոշակի դժվարություններ ունի գործակալի՝ Պավել Անդրեեւի հետ, որը բոլորից լավ է տեղեկացված, որ Ֆուտբոլիստին վաճառեն 15 մլն եվրոյով: Նա հույս ունի, որ Արշավինի տրանսֆերային գինը պետք է զգալիորեն բարձր լինի: Իսկ այդ դեպքում Ֆուտբոլիստի տեղափոխման հարցում հնարավոր են բարդություններ ծագեն:

Ըստ բրիտանական Sun թերթի, Արշավինով հետաքրքրվում է նաեւ Լոնդոնի «Արսենալը», որի գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը շտապ է ցանկանում իր թիմում տեսնել ռուս ֆուտբոլիստին: Սակայն Արշավինը հավանաբար տեղափոխվի Լոնդոնի այլ ակումբ՝ «Չելսի», որի սեփականատեր Ռոման Աբրամովիչը 12 մլն ֆունտ ստերլինգ է առաջարկել «Չենիթին»: Ըստ Daily Mirror-ի, «Չենիթի» ղեկավարությունն ու Արշավինը նախնական համաձայնություն են տվել եւ շուտով պետք է մեկնեն Լոնդոն՝ բանակցություններ:

Սակայն այս տեղեկատվությանը հետեւեց հաջորդը: Արշավինը հանդիպել է «Չենիթի» նախագահ Ալեքսանդր Դյուկովի հետ, որը նրան առաջարկել է ավելի լավ պայմաններով եւս երկու տարով երկարաձգել պայմանագիրը: Արշավինի ներկայիս պայմանագիրը գործում է մինչեւ 2010-ի դեկտեմբերի 31-ը: Ֆուտբոլիստը տարեկան մոտ 3 մլն եվրո է ստանում:

Հայաստանից «Միկան» ու «Փյունիկը»

Անգլիայի չեմպիոն ու չեմպիոնների գավաթակիր «Մանչեսթր Յունայթեդ» արդեն 3 ամիս գլխավորում է ափսարհի 350 ուժեղագույն ակումբների ցանկը: Նախորդ ամսվա համեմատ 2-րդ հորիզոնականում տեղ է զբաղեցրել Լոնդոնի «Չելսին»: Իսկ 2-րդ տեղը զբաղեցնող «Բոկա Խունիորսը» նահանջել է 9-րդ հորիզոնական: Լավագույն տասնյակի կազմը մնացել է անփոփոխ: Փոփոխություններ են տեղի ունեցել միայն տասնյակի ներսում:

Ինչպես եւ նախորդ ցուցակում, այս անգամ էլ Հայաստանը ներկայացնում են «Միկան» ու «Փյունիկը»: «Միկան» 9 հորիզոնականով բարձրացել է եւ այժմ 74 վարկանիշով զբաղեցնում է 249-րդ տեղը: Իսկ ահա «Փյունիկը» 5 հորիզոնականով նահանջել է՝ 62,5 վարկանիշով հանգրվանելով 342-րդ տեղում:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից լավագույն ցուցանիշն ունի ՌԴ չեմպիոն եւ ՈւԵՖԱ-ի գավաթակիր «Զենիթը», որը չորս տեղով նահանջել եւ զբաղեցնում է 26-րդ հորիզոնականը: 100 լավագույն ակումբների շարքում տեղ են զբաղեցնում նաեւ Դոնեցկի «Շախտյորը» (36-րդ տեղ), Մոսկվայի «Սպարտակը (65-րդ տեղ), Տալլինի «Լեւադիան» (74-րդ տեղ) եւ Կիեւի «Դինամո» (77-րդ տեղ):

Ներկայացնում ենք լավագույն տասնյակի ցուցանիշները:

1. «Մանչեսթր Յունայթեդ»	Անգլիա	286
2. «Չելսի»	Անգլիա	258
3. «Բավարիա»	Գերմանիա	252
4. «Գլազգո Ռեյնջերս»	Շոտլանդիա	251,5
5. «Բարսելոն»	Իսպանիա	251
6. «Ռոմա»	Իտալիա	248
7. «Լիվերպուլ»	Անգլիա	243
8. «Արսենալ»	Անգլիա	237
9. «Բոկա Խունիորս»	Արգենտինա	231
10. «Ինտեր»	Իտալիա	226

Ընտանեկան եզրափակիչ

Թենիսի Ուիմբլդոնի մրցաշարում կանայք որոշեցին եզրափակիչի մասնակիցներին: Վճռորոշ խաղը կվերապահվի Ուիլյամս քույրերի մրցավեճի: Ելենա Լիխովցեւան էլ չհաջողվեց կասեցնել Վինուս Ուիլյամսի հաղթարշավը Դեմեստեւային էլ չհաջողվեց կասեցնել Վինուս Ուիլյամսի հաղթարշավը: Դա մրցակիցների 8-րդ հանդիպումն էր: Նախորդ մրցախաղերում Ելենան կը: Դա մրցակիցների 8-րդ հանդիպումն էր: Նախորդ մրցախաղերում Ելենան միայն 2 անգամ էր հաղթել ամերիկուհի թենիսիստուհուն: Այս անգամ Վինուսը 2 անգամ էր հաղթել ամերիկուհի թենիսիստուհուն: Այս անգամ Վինուսը հաղթեց 2 խաղափուլում (6-1, 4-6): Սերենան էլ առավելության հասավ՝ չին թենիսիստուհի Չժեն Ցզիի նկատմամբ (6-2, 7-6):

Պորտուգալացիները հրավիրում են Կեյրուշին

Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիան առաջարկել է «Մանչեսթր Յունայթեդ» գլխավոր մարզչի օգնական Կեյրուշին սանձնել երկրի ազգային հավաքականի ղեկը: Նա պետք է փոխարինի «Չելսի» տեղափոխված գալին հավաքականի ղեկը: Նա պետք է փոխարինի «Չելսի» տեղափոխված գալին հավաքականի ղեկը: Լուիս Ֆելիպե Սկոլարիին: Կեյրուշը մտածելու համար ժամանակ է խնդրել: Լուիս Ֆելիպե Սկոլարիին: Կեյրուշը մտածելու համար ժամանակ է խնդրել: Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Միգելը մտադիր է մեկնել Մանչեսթր եւ տեղում ակումբի ղեկավարության հետ քննարկել Կեյրուշի տեղափոխման դիմաց վճարելիք փոխհատուցման գումարի չափը:

Մականն արժանի տեղը կգտնի Գինեսի ռեկորդների գրքում

Հուլիսի 14-ին Գինեսի ռեկորդների գրքում իր արժանի գրանցումը կստանա ափսարհի ամենաերկար հոկեյի մականը: Դունկան Բաթերսոնը գանվող փայտաբեկորի ամենաերկար հոկեյի մականը: Դունկան Բաթերսոնը գանվող փայտաբեկորի ամենաերկար հոկեյի մականը: Այդ յուրօրինակ տյա այդ մականի երկարությունը 63 մետր է, իսկ՝ 33 տոննա: Այդ յուրօրինակ տյա այդ մականի երկարությունը 63 մետր է, իսկ՝ 33 տոննա: Ցուցանմուշը դեռեւս 1986-ին զարդարում էր Վանկուվերում կազմակերպված ցուցանմուշը դեռեւս 1986-ին զարդարում էր Վանկուվերում կազմակերպված «Էքսպո-86» համաշխարհային ցուցահանդեսում կանադական տաղավարը: «Էքսպո-86» համաշխարհային ցուցահանդեսում կանադական տաղավարը: Ավելի քան 20 տարի Դունկանի բնակիչները պայքարում էին յուրօրինակ ցուցանմուշը Գինեսի ռեկորդների գրքում գրանցելու համար: Չգիտես ինչու, ցուցանմուշը Գինեսի ռեկորդների գրքում գրանցելու համար: Չգիտես ինչու, ցուցանմուշը Գինեսի ռեկորդների գրքում գրանցելու համար: Գինեսի ռեկորդների գրքի հրատարակմամբ սկսեց զբաղվել Կանադացի Ջիմի Պեթիսոնը, Դունկանի բնակիչներից մեկին հանդիպելով հանդիպել նրա հետ ու պատմել հրաշք մականի մասին:

Հաղթեց անձնական ռեկորդով

Աթենքի օլիմպիադայի արծաթե մրցանակակիր Բրայան Քլեյը տասնամարտում նվաճեց ԱՄՆ-ի չեմպիոնի տիտղոսը՝ սահմանելով անձնական ռեկորդ: Նա վաստակեց 8832 միավոր: Այդ արդյունքը սպորտի պատմության մեջ 10-րդն է: Իսկ ռեկորդը պատկանում է չեխ Ռոման Սեբրլեին, որը 2001-ի մայիսի 27-ին Գեսցիսում անցկացված մրցումներում վաստակել էր 9026 միավոր:

Գեյը մտադիր է գերազանցել ափսարհի ռեկորդը

Ամերիկացի առագավազորդ Թայսոն Գեյը մտադիր է հուլիսի 25-ին Լոնդոնում կայանալիք մրցումներում կրկնել 100 մ վազքում ռեկորդային իր ցուցանիշը, որն ուժեղ համու պատճառով չդրանցվեց որպես ափսարհի ռեկորդ: Հիշեցնենք, որ հունիսի 29-ին նա ցույց էր տվել 9,68 վրկ արդյունք, ինչը 0,04 վրկ-ով գերազանցում է ճամայկացի Ուսեյն Բոլտի համաշխարհային ռեկորդը: Սակայն համու արագությունը մրցումների ժամանակ 4,1 մ/վրկ էր, ինչը երկու անգամ գերազանցում էր թույլատրելի նորման: «Իմ առաջին նպատակը Պեկինի օլիմպիական խաղերի ուղեգիր նվաճելն էր, ինչը հաջողությամբ կատարեցի: Զգում եմ, որ կարող եմ կրկնել ցույց տված արդյունքս: Հուլիսի 25-ին շատ լավ մրցակից կունենամ հանձին ճամայկացի Ասաֆա Պաուելի: Հուսով եմ, որ մենք երկրպագուներին կհամոզենք շատ հետաքրքիր մրցում», հայտարարել է Թայսոն Գեյը:

Ափսարհի ռեկորդ 100 մ վազքում մեկ ամիս առաջ է բարելավել ճամայկացի Ուսեյն Բոլտը՝ ցույց տալով 9,72 վրկ արդյունք: Դա 0,02 վրկ-ով գերազանցում է նրա հայրենակից Ասաֆա Պաուելի ռեկորդը:

ՏՊԱԿՈՒՅԹԵՐ

Էդգար Մանուշարյանը կխաղա «Նեյմեգենում»

«Ազգն» արդեն տեղեկացրել է, որ Ամստերդամի «Այաքսը» տրանսֆերի է հանել Էդգար Մանուշարյանին: Եվ ահա հայտնի դարձավ, որ հայ ֆուտբոլիստը մեկ տարվա վարձավճարով հանդես է գալու Հոլանդիայի առաջնության մասնակից մեկ այլ ակումբում՝ «ՆԵԿ-Նեյմեգենում»: Ինչպես նշել է «Այաքսի» տեխնիկական տնօրեն Դանի Բլինդը, «Նեյմեգենում» խաղալով, Էդգար Մանուշարյանը խաղային անհրաժեշտ փորձ կկուտակի եւ բարելավելով ունակությունները, կվերադառնա նախկին թիմ: Հուսանք, որ այդպես էլ կլինի:

Էդգար Մանուշարյանի նոր թիմը՝ «ՆԵԿ-Նեյմեգենը» նախորդ առաջնությունում 18 թիմերի մրցավեճում զբաղեցրել է 8-րդ տեղը: 34 խաղում թիմը վաստակել է 49 միավոր (+14=7-13, 49-50):

Ինչպես հայտնի է, «Այաքսը» նոր մրցաշրջանում գլխավորելու է Հոլանդիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Մարկո վան Բաստենը: Նա արդեն թիմ է հրավիրել «Հերենվենի» եւ Սերբիայի հավաքականի հարձակվող Միրալեմ Սուլեյմանիին, ով հետաքրքրում է նաեւ «Չելսիին»:

Պետրոս Մեծի շանսան Արթուր Աբրահամին

Կոլումբիացի բոնցֆամարտիկ Էդիսոն Միրանդային նոկաուտով հաղթելուց հետո Արթուր Աբրահամը ժամանել է Հայաստան: Պրոֆեսիոնալ ռինգում նա տոնած 27-րդ հաղթանակի առիթով ՌԴ պատասխանության, անվտանգության եւ իրավակարգի ակադեմիան Արթուր Աբրահամին պարգեւատրել է Պետրոս Մեծի շանսանով:

Բարաբյանը զիջեց մրցակցին

Ուկրաինայում բնակվող հայազգի բոնցֆամարտիկ Յուրի Բարաբյանին չհաջողվեց նվաճել WBA-ի վարկածով կիսածանր քաշային կարգում ափսարհի չեմպիոնի թափուր տիտղոսը: Բուենոս Այրեսում կայացած մենամարտում Բարաբյանը միավորներով զիջեց արգենտինացի Հյուգո Գարային: Երեք մրցավարներն էլ նախապատվությունը տվեցին արգենտինացուն (120-108, 118-110, 118-111):

Հալիլ Մութլուն հրաժարվեց օլիմպիադայից

Ծանրամարտի պատմության մեջ օլիմպիական խաղերի քառակի առաջին չեմպիոնը դառնալու Հալիլ Մութլուի երազանքն անկատար մնաց: Թուրք ծանրոցը խորհրդակցելով երկրի սպորտի նախարարի հետ, հրաժարվել է Պեկինի օլիմպիադայի մասնակցությունից:

54 կգ քաշային կարգում 1996-ի Ատլանտայի եւ 56 կգ քաշային կարգում 2000-ի Սիդնեյի ու 2004-ի Աթենքի օլիմպիադաների չեմպիոնը մինչ այդ ծրագրել էր մասնակցել նաեւ իր չորրորդ օլիմպիադային: Սակայն մարզումներից մեկի ժամանակ նրան չհաջողվեց բարձրացնել պատվիրած նախնական քաշը եւ Մութլուն հասկացավ, որ Պեկինում չի կարող պայքարել չեմպիոնի տիտղոսի համար:

Հիշեցնենք, որ Մութլուն 2005-ին արգելված խթանիչների օգտագործման համար 2 տարով որակազրկվել էր: Այս տարվա արդիլին կայացած ծանրամարտի եվրոպայի առաջնությունում 34-ամյա թուրք ծանրոցը վերջին 13 տարիների ընթացքում առաջին անգամ պարտություն կրեց՝ ոսկե մեդալը անձնական ավելի ծանր քաշի պայծառով զիջելով մոլդովացի Բոտուին:

Դոմենեկը կշարունակի ափսատանքը

Թեեւ եվրոպայի առաջնությունում Ֆրանսիայի հավաքականին չհաջողվեց հաղթահարել նույնիսկ խմբային մրցաշարի արգելքը, սակայն երկրի ֆուտբոլի ֆեդերացիան շարունակում է վստահել գլխավոր մարզիչ Ռայմոն Դոմենեկին: Նրա պայմանագիրը մինչեւ 2010-ն է: 56-ամյա մասնագետը հանդիպել է ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ժան Պիեռ Էսկալեթի հետ: Վերջինս առաջարկով տնօրենների խորհուրդը հավանություն է տվել Դոմենեկին թողնել հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում մինչեւ ափսարհի 2010-ի առաջնության ավարտը:

Դոմենեկը հավաքականի ղեկը սանձնել է չորս տարի առաջ՝ փոխարինելով ժակ Սանտինիին: Նրան հաջողվեց հավաքականին ափսարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր պարգեւել: Ֆրանսիացիները հաջող հանդես եկան առաջնությունում՝ հասնելով մինչեւ եզրափակիչ, որտեղ 11 մ հարվածներով զիջեցին իսպանցիներին: 2010-ի ափսարհի առաջնության ընտրական մրցաշարում Ֆրանսիայի հավաքականի մրցակիցներն են լինելու Սերբիայի, Լիտվայի, Ավստրիայի, Ռումինիայի եւ Ֆարերների ընտրանիները:

Ալվեսը տեղափոխվեց «Բարսելոն»

Բրազիլիայի հավաքականի եւ իսպանական «Սեւիլիայի» աջ պաշտպան Դանիել Ալվեսը տեղափոխվեց «Բարսելոն»: Նրա տրանսֆերը կատալոնցիներին 29 մլն եվրո արժեցավ: Ալվեսը հառաջա պայմանագիր է կնքել կատալոնյան ակումբի հետ:

«Կատարվեց երազանքս եւ շատ երջանիկ եմ: Ցանկանում եմ հնարավորինս շուտ խաղադաշտ դուրս գալ, որպեսզի բոլորին ապացուցեմ, որ «Բարսելոնը» ճիշտ ընտրություն է կատարել: Շատ ֆուտբոլիստներ կան, որոնք կցանկանան իմ տեղը հայտնվել: Սա ինձ համար հիանալի պարգեւ է, թանկագին մի հզոր ակումբից դուրս: Ես այժմ «Բարսելոնի» մի մասնիկն եմ եւ ուրախ եմ ափսարհի լավագույն ակումբ տեղափոխվելու համար», հայտարարել է 25-ամյա ֆուտբոլիստը պայմանագիրը ստորագրելուց հետո:

«Բարսելոնի» նոր գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան գոհ է ձեռքբերումից. «Լիոնել Մեսին ու Ալվեսը իրենց դիրքերում լավագույններից են: Եթե նրանց միասին օգտագործենք, ապա աջ եզրում ուժեղ երկրակ կունենանք: Ալվեսին խաղալու համար տարածք է անհրաժեշտ: Հույս ունեմ, որ նա իր լավագույն խաղը կցուցադրի»:

Հանդիպումը կրկին հետաձգվել է

Հուլիսի 6-ին պետք է կայանար «Միկա»-«Փյունիկ» հանդիպումը, որը հետաձգվել էր դեռեւս 4-րդ տուրից: Սակայն պատճառաբանելով չեմպիոնների լիգայի առաջիկա մրցախաղին նախապատրաստվելու անհրաժեշտությունը, «Փյունիկ» ակումբի խնդրանքով «Միկայի» հետ հանդիպումը կրկին հետաձգվել է: Հաջող խաղը «Փյունիկը» կանցկացնի հուլիսի 10-ին՝ հյուրընկալելով «Արարատին»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Երեւանյան երթեւեկն ու եղանակով, ժամանակով թելադրված գազ ու բենզինի գները...

Մեգապոլիսի բոլոր հասկանիները երեւանցն ասիճանաբար սովորանացնում է: Եվ այդ պրեսսինին իրականությունում աննկատ չէ կանոնազուրկ երթեւեկի դեռակատությունը: Ու որքան էլ հակասական է, սակայն երեւանյան ամբիցիոզ երթեւեկը բացառում է կանոններով երթեւեկող վարորդի ապահովությունը, հետեւաբար՝ ուղեւորի ու հետիոտնի: Անպատկերացնելի խուսավարումները մեր առօրյա երթեւեկի, եւ ոչ միայն, անհակտելի մաս են դարձել: Իսկ Երեւանին հատուկ եղանակային կտրուկ փոփոխությունները ու անակնկալ դրսեւորումները, որքան էլ դիտարժան, այնուամենայնիվ, խնդրահարույց են: Նման դեպքերում լիովին կաթվածահար է լինում մայրաքաղաքի տրանսպորտային կյանքը: Անհնար է դառնում հասարակական տրանսպորտից օգտվելը, քանի որ քաղաքացիս դարարում են երթուղի դուրս գալ եւ տեխնիկապես ոչ այնքան վաս վիճակում գտնվող, եւ անհուսորեն մաշված երթուղային տաքսիները: էլ ուր մնաց՝ ձյան ու կարկուտի դեպքում: Դա մի խնդիր է, որ առանձնապես չի հուզում գնահատողներին: Քաղաքաթեսարանն էլ իր հերթին որոշակի բացատրություն է ներկայացնում ու հուսադրում, որ պակերը կտրականապես կգիտնվի սեղրցնյա անցումների բացումից հետո:

Իսկ մինչ այդ պակերի անհավասարի կտրական փոփոխությունը եղանակային նորմալ պայմաններում ամեն քայլափոխի հանդիպող տաքսիները դրանց բացակայության դեպքում գերադասում են չանալ՝ պասպիրելու դեպքում տեղ չեն հասնում, քանի որ ի սկզբանե չէին էլ պատրաստվում, չնայած օրերաստի ինդումներին, թե դա ոտքի հարց է, պասաթելու դեպքում էլ աշխատում են այլ՝ անտրամաբանական գնացուցակով: Եվ փասսն այդ վարորդների կարիքով արժանի չէ դժգոհության: Բացատրություն էլ ունեն, որ ներկայացնում են ամենայն հանգստությամբ. «Դե, աղձրեւին... աշխատում եմ, աղբ կամ քոր ջան», կամ «Ժամը ուշ ա, բա ինչ ասեմ», ու պահանջում է առնվազն կրկնակի ուղեվարձ: Մնացյալն արդեն ըստ հայեցողության... Այդ տրամաբանությամբ կարելի է ենթադրել, որ աղձրեւտ եղանակին չափման միավորները փոփոխության են ենթարկվում, իսկ գազ ու բենզինի գներն աճում են նաեւ օրվա ժամին համապատասխան:

Սա էլ մի այլ խնդիր է, որ առանձնապես չի հուզում տաքսի ծառայությունների տերերին:

Եվ այսպես, ոչ սեփական մեքենայով երթեւեկող երեւանաբնակը պարտադրված դրսեւորում է ամբիցիաների մի տեսակներ՝ տաքսիստ, վերջինս՝ պեսավոտեսության անհարկի շորթմանը չարժանանալու համար եւ երեւանաբնակը երթեւեկության 3 դեռակատարություններից՝ վարորդ, ուղեւոր, հետիոտն, որն էլ սանձնաթ լինի, չի մտածում ո՛չ կանոնի, ո՛չ էլ զիջման մասին: Անպատժելիությունն ու ամբիցիաներն են կառավարում երեւանյան երթեւեկը:

ՆԵՌԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Անի Տուր» պատմաճանաչողական տուրիստական գործակալությունը կազմակերպում է 7-ից 10-օրյա բարձրակարգ շրջագայություններ դեպի պատմական Հայաստան՝ նվիրված ամենթիկահայ մեծանուն գրող Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Շրջագայության ծանոթագիրները բացի մեծ գրողի ծննդավայր **Բիբլիսից**, կայցելեն նաեւ **Կարս, Անի, Բագին, Բայազետ, Վան, Մուշ, Խնուս, Երզրում, Արդահան** քաղաքները:

Օգտվեք Ձեզ ընձեռված եզակի հնարավորությունից եւ ծանոթացեք դարձեք մեր այս հիշարժան ուխտագնացությունները:

Մանրամասների համար կարող եք զանգել մեզ հետեւյալ հասցեով՝
Երեւան,
Իսահակյան 28, սենյակ 20
Հեռ. (091) 203 206,
(094) 203 206:

ԱՆԻ ՏՈՒՐ

Կենտրոնական բանկի նախագահի այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Այսօր Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը մեկնելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ մասնակցելու Հայաստանի բանկերի միության խորհրդի արտագնա նիստին:

ՀԲՄ խորհրդի նիստում ներառվելու են բանկային համակարգի կողմից մատուցվող ծառայությունների տրեկտրի ընդլայնման հարցերը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

EUROPEAN UNION
Delegation of the European Commission to Armenia

VACANCY: ICT post

Reference: 35789 (please quote the reference number in your application)

Job definition: To ensure, under the supervision of the ICT Service Officer, the correct operation of ICT desktop systems and provide support to the end-users of these systems.

Functions and Duties

- Operational IT Management
- IT Support in service management
- Web site development in cooperation with web site provider
- IT training and coaching

More detailed information on functions and duties can be found on the Web site of the Delegation: www.delarm.ec.europa.eu

Job requirements

- Post-secondary education attested by a diploma, or
- Secondary education attested by a diploma giving access to post-secondary education and appropriate professional experience of five years, prefarably in the following fields: server administration, network administration, IT security management, information systems, IT hardware.

Competencies

Thorough knowledge of English. If you whish to apply for this job, please send your CV and application letter in English, with the mention application for ICT position by 25 July 2008 to:

Ms. Rozina Asatryan
Administrative Officer
Delegation of the European Commission to Armenia
21 Frik street, Yerevan, Armenia
Fax: (+ 374 10) 546495
E-mail: Rozina.Asatryan@ec.europa.eu

Due to the large amount of applications expected, we will only be able to notify you if you have been selected for the interview. Interviews will be taking place in Yerevan between 01 and 10 August 2008. We are looking forward to your application.

Council of Europe

800 million Europeans 47 member States

The Council of Europe, based in Strasbourg, France, is a political organisation founded in 1949 to promote greater unity among its member States. Today its membership numbers 47 States across Europe, working together to promote democracy, human rights and the rule of law and to develop common responses to political, social, cultural and legal challenges.

Competitive examination open to

Armenian-speaking Secretarial Assistants

for the Registry of the European Court of Human Rights in Strasbourg, France

Fixed-term position (initial two year contract)

Vacancy Reference: e51/2008

The European Court of Human Rights was set up in 1959 by the Council of Europe as one of its principal mechanisms for enforcing the obligations entered into by contracting states under the European Convention of Human Rights which protects the civil and political rights and freedoms of Europe's 800 million citizens.

The role. This opportunity for Secretarial Assistants has arisen within the Registry of the European Court of Human Rights and is open to qualified nationals of member States of the Council of Europe. In this role, you will provide wide ranging secretarial support to the Court. Your duties will include processing documents, preparing correspondence, decisions and judgments, answering requests for information and maintaining databases.

The candidate. With formal secretarial training/qualifications, you must have at least two years' secretarial experience and the ability to use computers. Very good knowledge of Armenian and of one of the official languages (English or French) including typing ability, as well as some knowledge of the other official language is necessary. The work demands order and discretion, a methodical approach and a flair for teamwork.

To apply. Applications must be made **in English or French** using the Council of Europe on-line application system. By connecting to our website **www.coe-recruitment.com** you can consult the detailed vacancy notice and create and submit your on-line application.

Closing date for receipt of applications: 7 August 2008.

Under its equal opportunity policy, the Council of Europe is aiming to achieve parity in the number of women and men employed in each category and grade.

The Council of Europe welcomes applications from all suitably qualified candidates, irrespective of gender, disability, marital or parental status, racial, ethnic or social origin, colour, religion, belief or sexual orientation.

COUNCIL OF EUROPE COMMISSION DE L'EUROPE

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թեմելյան կենտրոնի բենզին վաճառող տվյալ են վերանորոգված գրասենյակային տարածքներ՝ ապահովված բոլոր անհրաժեշտ հարմարություններով, պահպանության ծառայությամբ, ջեռուցմամբ, ավտոկայանատեղիով: Կենտրոնն ունի նաեւ 2 կոնֆերանս դահլիճներ եւ պակերատարածք՝ պատշաճ միջոցառումների անցկացման համար:

Դասցեն՝ Խանջյան 55, հեռ.՝ *573 057, 572 422, 575 823:*

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքացիական ծառայության կառավարման գրասենյակում կազմվել է ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի եւ ՀՀ կառավարության 07.09.99 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն: Հայտարարվում է ՀՀ Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքում հողի սեփականաբար վաճառքի թեմայով բոլոր հասանելի վարչական քաղաքի տարածքներից 42.0 լայնքի քաղաքի քաղաքացիների քննարկման նպատակով:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան մասնակցել նախագծի նախնական ստորագրմանը, կարող են անհատապես տեղի ունենալ 17-18-ը դեկտ. ՀՀ քաղաքացիական ծառայության կառավարման գրասենյակում (հասցեն՝ Կառավարական 3-ի տուն, 5-ի հարկ, 541 սենյակ):

Հասարակությունը կարող է նախնական ստորագրի նախնական ստորագրի լրացնելու մասին տեղի կունենա 2008 թ. հուլիսի 11-ին, ժամը 16-ին Կառավարական 3-ի տուն, 5-ի հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքացիական ծառայության կառավարման գրասենյակում

ՁՈՒԱԳԻՐ ՀԱՄԱՐ ՀԱՏԵՑՈՒՄԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Ցուցակային գրանցման համար, գին. ինք. Յակոբ Անթիեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 4.07.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: